


338.98
Q - 93



17 FEB 2010

338.98
9-93

Ա. ԳՐԵՑՄԱՆ

ՅԵՐԵՍՆԵՐՈՒ ԴԵՊԻ
ԹԵ ԹԵ Վ
ՀՐԳՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽԵՂԱՔԱ

1932

ՅԵՐԵՎԱՆ

22 MAR 2013

Ա. ԳՐԵՑՇՄԱՆ

ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ
ԹԵԹԵՎԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Հ. Թուրշյանի
Խմբագրեց Մ. Պողոսյան

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԽՍՀՄ-ՈՒՄ ՅԵՎ. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Խորհրդային յերկրի ժողովրդական տնտեսությունը հսկայական քայլերով առաջ է ընթանում: Մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանը: Հնգամյակի յերրորդ, վճռական տարում մենք կհասնենք արդյունաբերական արտադրանքի այնպիսի աճի, զորն հավասար և մինչհեղափոխական նուսաստանի ամրող արդյունաբերության վող արտադրությանը: 1931 թվին մենք դործի կդցենք 518 նոր արդյունաբերական հսկաներ և 1040 մեքենա-արակտորային կայաններ: Մենք ստեղծում ենք նոր քարածիսա-մետաղագործական բազա արելելքում:

1931 թվի գարնան հանրագումարով հիմնական հաշցատիկային շրջաններում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտված է: Մնացած հացահատիկային շրջաններում կոլտանեսությունները միացրել են չքավորմի՞ակ տնտեսությունների կիսից ավելին և ցանքի տարածության ավելի քան 60 տոկոսը: Կոլտանեսական գյուղացիությունը գարձել է հողագործության կենտրոնացման համար:

«Խորհանտեսությունների զարգացման հետևանքով և աշխատավոր գյուղացիության մեծամասնության անցնելը կուկավացման ուղիներով մեր յերկիրը դարձն և ամենախոշոր գյուղատնտեսաւրյան յերկիրն ամրող աշխարհում. 1931 թվի գարնան՝ 200 հազար կոլտնեսությունները (կորոնք միացրել են 13 միլիոն նախկին անհատական տնտեսություններ) 4 հազար խորհսմտեսությունների հետ միասին ցանել են գարմանացամի տարածությամ ավելի քան ٪ մասը»:¹⁾

¹⁾ Համկ(բ)կ կենտկոմի հունիսյան (1931 թ.) պլենումի ընկերակովեմի գեկուցման առթիվ ընդունած բանաձեռնեց:

ԽՍՀ Միության բոլոր դյուլական տնտեսությունների կիսից ավելին կոլտնտեսություններում ընդգրկելը և խորհանտեսությունների ուժեղ աճն ընթացիկ տառում՝ ապահովում են սոցիալիստական եկամենուների բացարձակ գերակշռությունը և գյուղական տնտեսության մեջ։ Այս բոլորը նշանակում են, վոր մենք մեր յերկրում ընթացիկ տարրում արդեն ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը։

Այդ վճռական հաջողություններին, վրորոնք հանդիսանում են կրօսակցության դիմավոր գծի ճշության ցայտուն ապացույցները, բնականաբար ուղեկցում ելայն մասսաների բարեկեցության աճը։ Ահա միքանիցուցանիշներ, վրորոնք պերճախոս կերպով ցույց են տալիս այդ վերելքը։

1929 թվին ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում զբաղված եր 12.394 հազար բանվոր ու ծառայող՝ 1930 թվին նրանց քանակն աճեց մինչև 14.269 հազարի։ 1930 թվին ԽՍՀՄ-ում, աշխարհի միակ յերկրում լիկվիդացիայի յենթարկվել գործադրկությունը։ 1931 թվին բանվորների և ծառայողների թիվն աճում է մինչև 16.300 հազարի։ Դեռ ավելի արագ աճում ե աշխատավարձի տարեկան ֆոնդը՝ 1929 թվին նաև կազմում եր 9.641 միլիոն ռուբլի, 1930 թվին՝ 12.541 միլիոն ռուբլի, իսկ 1931 թվին նաև հավասար կլինի 15.344 միլ. ռուբլու, այսինքն 22 տոկոսով ավել քան նախորդ տարրում։ Դրա հետ միասին նշանակալից չափով աճում են և մյուս աղբյուրները, վրորնչից կախված ե աշխատավորության նյութական բարեկեցությունը։ աճում ե սոցապի բյուջեն, ավելացվում են բնակչնարարության հատկացումները և այլն։ Տարեցնական ավելի ու ավելի մեծ քանակությամբ բանվորներ անց են կացվում 7 ժամյա աշխատանքային որդա, վորոնիք հերթին բարելավում ե բանվոր դասակարգի կուլտուրական-նյութական դրությունը։

Այս բոլոր պլոյեաներն իրենց ակնհայտ արտահայտությունն են գտնում ժողովրդական յեկամտի աճի մեջ։ 1929 թ. ժողովրդական յեկամտուն ավելացել ե 11.5 տոկոսով, 1930 թվին —մոտավորապես 20 տոկոսով, իսկ ընթացիկ տարրում նաև համարյա 39 տոկոս աճ կտտ, այսինքն այնպիսի աճ, վորպիսին մինչհեղափոխական Ռուսաստանը ձեռք բերեց 13 տարվա ընթացքում, սկսած 1900 թվից մինչև 1913 թիվը։

Ամբողջ ժողովրդական յեկամտի մեծագույն մասը, դա բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության յեկամտուն է։

16-րդ կուսամագումարում ընկ. Ստալինը վերլուծելով ժողովրդական յեկամտի բաշխումը, ցույց տվեց, վոր—

«...այն ժամանակ, յերբ առաջավոր կապիտալիստական յերկրներում շահագործող դասակարգերի բաժինը ժողովրդական յեկամտի մեջ կազմում է 50%, յերեմն ել ավելի, մեղ մոտ, և ԽՍՀՄ-ում, չահագործող դասակարգերի բաժինը ժողովրդական յեկամտի մեջ կազմում է 2%-ից վոչ ավելին։¹⁾

Այս ավյաները վերաբերում են 1929/30 թվականին։ 1931 թվին չահագործող դասակարգերի բաժինն ել ավելի յե իջնում, իսկ աշխատավորության բաժինը նշանակալից չափով մեծանում։

Լայն մասսաների բարեկեցության աճը, հասկանալի յե, առաջ և մզում լայն մասսայական սպառման յենթակա ապրանքների —այսինքն թեթև արդյունաբերության արտադրանքի—պահպանի մեծացումը։

Տնտեսակարների խորհրդակցությանը, 1931 թվի հունիսի 23-ին, ընկ. Ստալինը մատոնանչեց, վոր բանվորը—

«... պահանջում ե իր բոլոր նյութական և կուտուրական պետքելի ապահովումն, և մենք պարտավոր ենք կատա-

¹⁾ ԱՏԱԼԻՆ. —Համեկ(բ)կ Կենտկամի քաղաքական հաշվետվությունը 16-րդ կուսամագումարում։

բելու նրա այդ պահանջը: Միք մոռանա, վոր այժմ մենք
վորոշ պահանջներով դիմում ենք բանվորին—նրանից պա-
հանջում ենք աշխատանքային դիսցիլինա, լարված աշխա-
տանք, սոցմբյութ, հարվածայնություն: Միք մոռանա, վոր
բանվորության խոչը մեծամասնությունը մեծ վերելքով և
ընդունել խորհրդային իշխանության այդ պահանջները և
հերոսաբար կատարում ե զբանք: Միք զարմանա դրա հա-
մար ել, վոր իրականացնելով խորհրդային իշխանության
պահանջները, բանվորներին իրենց հերթին պետք ե պահան-
ջն նրանից՝ բանվորության նյութական ու կուլտուրական
դրության հետաղ բարեկալման նրա պարտավորությունների
կատարումը»:¹⁾

Ահա թե ինչու կարեվորագույն խնդիրներից մեկն ե
հանդիսանում աշխատավորության կենցաղի հետագա
բարելավումը և սպասարկումը, վորը նշանակալից չա-
փով կախված է մեր թեթև արդյունաբերության զար-
գացումից: Դա նշանակում է, վոր մենք պետք ե հե-
ղափոխական տեմպերով առաջ մղենք թեթև արդյունա-
բերությունը:

ԾԱՆՐ ՅԵՎ ԹԵԹԻԿԱԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ- ԹՅՈՒՆԸ

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ—ԹԵԹԵՎԿԻ ԳԵՐԵԼՔԻ ԼԾԱԿԱՆ Ե

Արդյունաբերության բնագավառում մեր հիմնա-
կան խնդիրը արտադրության միջոցներ արտադրով (այսպես կոչված Ա. խումբը) ճյուղերի ուժեղ զարգա-
ցումն ե —այսինքն վառելանյութ, մետաղ, մեքենա-
ներ, շինանյութերի քիմիան: Դա, իհարկե, չի նշանա-
կում, վոր մենք ուշադրություն չենք դարձնում Բ. խըմ-
բին, այսինքն՝ սպառման միջոցներ արտադրող ճյուղե-
րին — մանածագործություն, կաշի, ուղին, լուցկի,
սննդի արդյունաբերություն և այլն: Բնդհակառակը,

¹⁾ ՍՏԱԼԻՆ. Նոր պայմաններ—անտեսական շնաբարության
նոր խնդիրներ:

վերջին տարիներում այդ ճյուղերն ել արտադրանքի
հակայական աճ են ունեցել:

Հեղափոխության ընթացքում մենք խոշոր նվա-
ճումներ ենք ձեռք բերել թեթև արդյունաբերության
զարգացման գործում: Մենք դեռ այս հնդամյակի մկրզ-
բում թեթև արդյունաբերության բոլոր ճյուղերում
նշանակալից չափով անցանք մինչպատերազմյան ար-
տադրությանը:

Այսպես, որինակի համար, բամբակեղենն հյուս-
վածքների արտադրությունը 1924 թ. 832 միլիոն մետ-
րից 1930 թվին հասել և մինչեւ 2.337 միլ. մետրի, այ-
սինքն՝ համարյա 3 անգամ ավելի: 1923-24 թվին արտա-
դրված է 6,2 միլիոն հատ մեծ կաշի, իսկ 1930 թվին
բաց և թողնված 17,2 միլիոն հատ—նույնպես համարյա
3 անգամ աճ: Կրկնակոչելի արտադրությունը 1923-24
թ. յեղել և 6,2 միլիոն զոյլ, իսկ 1930 թվին՝ 42,4
միլ. զույլ՝ համարյա 7 անգամ ավելացում:

Այսպիսով, յեթե մենք ասում ենք, վոր մինչև այժմ
հանարավորություն չունեինք առաջ շարժելու թեթև ինդուստրիան, այդ իսկի ել չի նշանակում աճի ընդ-
հատում, անկումն կամ անշարժություն: Դա միայն
նշանակում է, վոր թեթև ինդուստրիայի զարգացման
տեմպերը նշանակալից չափով յետ են մնում ծանր ար-
դյունաբերության տեմպերից: Այդ յետ մնալը հատ-
կապես նշանակալից ե վերջին տարիներում: Արագես
1927 թ. ծանր արդյունաբերության արտադրանքը նա-
խորդ տարվա զիմաց աճ տվեց 18,9 տոկոսով, իսկ թե-
թել արդյունաբերության արտադրանքն այդ տարում
աճեց 16 տոկոսով, հաջորդ 1928 թվին ծանրն աճել և
24 տոկոս, իսկ թեթել՝ 21,7 տոկ., 1929 թ. ծանր ար-
դյունաբերությունն իր արտադրությունն ավելացրեց
28,5 տոկոս, իսկ թեթել՝ միայն 19,5 տոկոս: Թեթև
արդյունաբերության հումքային դժվարությունները
հատկապես զգացվեցին 1930 թվին, յերբ թեթև արդյու-
նաբերությունն աճեց միայն 8,7 տոկոս ի զիմաց ծանր
արդյունաբերության 40,6 տոկոս աճի:

Ամենից առաջ մենք զարգացրինք ծանր արդյունառ բերությունը՝ հաղորդելով նրան բացասիկ բարձր տեմպեր։ Այդ պետք է նրա համար, վորովինու միայն ծանր արդյունաբերության առաջնահերթ զարգացումն և ապահովում առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկա-տեխնական իմաստով «հասնելու և անցնելու» լոգունդի իրականացումը։ Մանր արդյունաբերությունն ամբողջ ժողովրդական տնտեսության սցիալիստական վերաձեռներպման և գյուղանտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքն է։ Ահա ինչու—

«... Մինչեւ այժմ մենք խնայում ենք ամեն բանի հաշվին, նույնպես նաև թեթև արդյունաբերության հաշվին, վորակեսզի վերականգնելինք ծանր արդյունաբերությունը։ Բայց ծանր արդյունաբերությունը մենք արդեն վերականգնեցնեք։ Երան հարկավոր և միայն ծավալել։ Այժմ մենք կարող ենք գտնալ դեպի թեթև արդյունաբերությունը և նրան առաջ շարժել արագացքած անմտերով։ Մեր արդյունաբերության զարգացման մեջ նորը, իմիչի այլոց, կայանում են նրանում, զոր մենք այժմ հնարավորություն ունենք առագացքած տեմպերով զարգացնելու և ծանր և թեթև արդյունաբերությունը։¹⁾

Ծանր ինդուստրիան—դա այն լծակն է, զորն անհրաժեշտ և բարձրացնելու համար ամբողջ ժողովրդական տնտեսությունը և մասնավորապես՝ թեթև արդյունաբերությունը։ Վորակեսզի բարձրացնել թեթև արդյունաբերությունը, հարկավոր և այդ ապահովել հումքով, սպառապղինել նոր տեխնիկայով, ավելի կատարելագործված մեքենաներով։ Հասկանալի յեւ, զոր մենք չենք կարող հիմնվել արտասահմանից մեքենաներ ներմուծելու վրա։ Վնասաբարները թեթև արդյունաբերությունը հրում ելին այնպիսի ուղիներով, վորակեսզի տապալելին արտասահմանյան, կապիտալիստական արդյունաբերությունից մեր արդյունաբերությունն ան-

1) ՍՏԱԼԻՆ. — Համկ(բ)կ Կենտկոմի քաղաքական գեկուցումը
XVI Կուսահամարելամարին։

կախ դարձնելու ոլայքարը։ Թեթև արդյունաբերության զարգացման համար հարկավոր և սեփական տեխնիկական բազա, հարկավոր և մեքենաշինարարության ուժեղ աճ, հետևաբար և մետաղաղործության, վառելանյութի արդյունաբերության և ծանր ինդուստրիայի այլ ճյուղերի զարգացումը։

ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԸ ՀՈՒՄՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՅԻ ՌՈՒՄ

Յեթև մենք պետք եւ ապահովենք Խորհրդային յերկրի անկախությունը մեքենասարքավորման բնագավառում, ապա այդպիսի ինդիր կանգնած և մեր առաջ և հումքի բնագավառում։ Յարական ԾՈՍԱՍՈՄՆԸ կիսագաղութային, հետամնաց յերկիր եր։ Նա թեթև արդյունաբերության համար արտասահմանից ներմուծում եր վոչ միայն մեքենաներ, այլև հումք, բամբակ, բուրդ, հումք կաշի, դարաղման նյութեր, կառուչուկ, վիմիակալ, մասամբ ել հումք՝ ճարպային արդյունաբերության համար և այլն։ Կարո՞ղ ենք մենք գնալ այդ նույն ճամանակարհով, կարո՞ղ ենք մենք շարունակել հումք ներմուծել արտասահմանից։ Վո՞չ, մենք պարտավոր ենք հնարավորին չափ ամենակարծ ժամկետում պահանջել մեր հումքային անկախությունը։ Այդ բանը պահանջում են սոցիալիստական շինարարության շահերը, յերկրի պաշտպանունակության ամրացման շահերը։ Այդ բանը մեզ թույլ են տալիս և մեր բնական հնարավորությունները։

«Մեզ մոտ, մեր յերկրում, ամեն բան կա, բացի միայն կառուչուկից։ Սակայն մի յերկան տարուց մենք կառուչուկ եւ կունենանք։ Այդ կողմից, բնական հարաբերությունների կողմից, մենք լրիվ կերպով ապահովված ենք։ Բնական հարաբերությունն մենք ավելի ունենք, քան հարկավոր և»։¹⁾

Ոյսպիսով, թեթև արդյունաբերության զարգացման հրաժեշտ պայմանը հանդիսանում է գյուղատնտեսու-

1) ՍՏԱԼԻՆ. — Ճնակավարների ինդիբների մասին։

Պյան զարդացման այնպիսի սակարդակ, վորը հնարա-
վորություն տա լրիվ կերպով մատակարարելու թեթև
արդյունաբերությանը սեփական հումք։ Սակայն դրա
համար պետք է վերացնել այն տեխնիկական հետամը-
նացությունը, վորն անխուսափելի յէ մանր, անհատա-
կան գյուղական տնտեսության համար, վորովհետեւ
նոր տեխնիկայի մուծումը, տրակտորացումն ու մեքե-
նայացումը, քիմիական պարարտանյութերի գործա-
ծությունը և ապրանքայնության բարձրացումն անհրա-
նար են մանր անհատական տնտեսության պայմաննե-
րում։ Անհրաժեշտ է վերակառուցել նրան սոցիալիս-
տական հիմունքների վրա, խորհունտեսությունների և
կոլտնտեսությունների հիման վրա։ Հետեվարար ծանր
ինքուստրիայի առաջնահերթ զարգացումն անհրաժեշտ
է քերև արդյունաբերության բարձրացման համար,
վորովիետ թեթև արդյունաբերության հումքի բազայի
ամրացումն ու սոցիալիստական վերակառուցումը հեն-
վում է տրակտորաշնարարության, գյուղատնտեսա-
կան մեքենաների կառուցման, ավտոշինարարության,
նավթային արդյունաբերության (վառելանյութ տրակ-
տորների և ամսումորիների համար), քիմիական պա-
րարտանյութերի արտադրության զարգացման և ծանր
արդյունաբերության մյուս ճյուղերի վերելքի վրա։

Տեխնիկական կուլտուրաների մշակումը պատկանում
է գյուղական տնտեսության ամենահետամնաց և ամե-
նաքիչ մեքենայացված ճյուղերի թվին։ Մինչև վերջին
տարին բամբակագործական տնտեսության մեջ հողի
մշակման հիմնական գործիքը յեղել են նույնիսկ վոչ թե
արորը, այլ գեռ ավելի նախնական ոմաչն՝ ու քետմե-
նը²⁾։ Յանքից հետո կատարվող մշակումը, բերքահա-

1) Ոժաչ (օմաչ)՝ տափան, արորի նման, սրածայր փայտ,
վորով քրքրում են հաղը։

2) Քետմեն (կետմեն)՝ բահի նման, սակայն միայն
ձևագով գործածվող ուղղեկական գործիք և, վորով հողը
քրքրում են, զիգում, նույնիսկ ջրանցքներ են բացում։

վաքը և մասամբը ել մի շարք տեխնիկական կուլտուրա-
ների հումքի նախնական մշակումը գեռ ձեռքով և կա-
տարվում։ Մանր անհատական տնտեսությունը չի կա-
րող ապահովել աշխատանքի արտադրողականության
անհրաժեշտ բարձրացումը և բերքատվության անր։
Նա չը կարող ապահովել և ապրանքայնության բարձ-
րացումը, վորովհետեւ տնտեսությունն ինչքան փոքր
և, այնքան ավելի ինքնապարփակ և իր մէջ։ Մանր
անտեսությունն ատիպված և ավելի քիչ հումք ցանել,
քան իրոշոր սոցիալիստական տնտեսությունը, վորպա-
զի իրեն նաև հացով ապահովի։ Միայն մանր տնտե-
սությունների միացումը կոլտնտկառություններում՝
հնարավորություն կտա բարձրացնելու համեմի բնիւ-
նուր (валовою) հավաքը և արդյունաբերության հանձ-
նումը (ապրանքային հավաքը—товарный сбор)։


Վորպեսդի թեթև արդյունաբերությանը մատակա-
րարենք հումք, ամենից առաջ անհրաժեշտ եր գյու-
ղական տնտեսության սոցիալ-առինիկական վերակա-
ռուցման ինդիքը զնել տեխնիկական կուլտուրաների
մշակման շրջաններում։ Սակայն դրա համար հարկա-
վոր եր նախ և առաջ Հիմնականում լուծել մի ուրիշ քա-
ղաքական առաջնակարգ կարեռորագույն խնդիր—հար-
կավոր եր լուծել հացահատիկային պրոբլեմը։

«Հացահատիկային պրոբլեմը,—ասաց Համեկ(թ)կ 16-րդ
համագումարում բնկ. Ստալինը, —համդիսանում և գյուղա-
կան տնտեսության մեջ Հիմնական ողակը և գյուղական
տնտեսության բոլոր մյուս պրոբլեմների լուծման բանա-
մեն»։

Գյուղական տնտեսության մյուս ճյուղ ճյուղերի զար-
գացման համար հացահատիկային պրոբլեմի նշանակու-
թյունը վորոշվում է նրանով, վոր պետության ձեռ-
քում հացահատիկային բավարար պահպատի տնեղծումը
հնարավորություն կտա աժան հացով ապահովելու
հումք արտադրող տեխնիկական կուլտուրաների շրջան-
ների մատակարարումը և զբանով կերպարացվի հումքի



Այսպես ելին բամբակ ցանում դեռ 1926 թ.:



Այժմ այսպես են ցանում: Շարքացան բամբակ ցանելը:

շանքի տարածությունը՝ Հացի պահեստի տեղծումը
Հնարավորություն կտա դնելու առանձին չըջանների
հումքի առանձին տեսակներում մասնագիտանալու
պրոբլեմը։ Այսպիսով, դործնականում ապացուցվեց
լենինյան տակտիկայի ճշությունը։ Ճոկել հիմնա-
կան ողակը և նրանից բռնելով դուրս քաշել ամբողջ
շղթան։ Այսպիսի հիմնական ողակ ծանր ինդուստրիան
է, վորին լենինը «սոցիալիզմի հիմնական բազա» յեր
կոչում և վորի մասին նա գրել ե այսպես։

«...Նռանց ծանր արդյունաբերության գրկան, առանց
նրա վերականգնման՝ մենք չենք կարող ստեղծել վայ մի ար-
դյունաբերություն։ Առանց նրան մենք ընդհանրապես կխոր-
տակվենք վրապես ինքնուրույն յերկիք»։¹⁾

Կուսակցությունը ծավալելով ծանր արդյունաբե-
րությունը, հնարավորություն ունեցավ սկսելու ժամա-
լուն սոցիալիստական հարձակում դյուզական տնտե-
սության մեջ, և դյուզում կապիտալիստական ելեմենտ-
ների սահմանարկակիման քաղաքարկանությունից անցնե-
լու կուլակության, վորպես դասակարգի, համատա-
րած կոլեկտիվացման հիման վրա, լիկվիդացիայի քա-
ղաքականության։

120 հազար տրակտոր, 1.040 նոր մեքենա-տրակտո-
րային կայաններ (նրանցից 130-ը բամբակացան չըջան-
ներում, 150-ը ճականդեղի, և 150-ը վուշի), 1930 թվի
համեմատությամբ դյուզմեքենաների մատակարարման
կրկնապատկումը, 7 հազար ավտոմոբիլ, վուշի և կա-
նեփի նախնական մշակման համար 489 նոր գործարան-
ներ, 24 միլիոն ցենտներ (145 միլ. ֆութ) պարաբու-
նյութ, 40 միլիոն ոռոքի վնասատուների դեմ պայքա-
րելու համար—ահա սոցիալիստական արդյունաբերու-
թյան արտադրական ոգնությունը դյուզատեսու-
թյունը։

ՊԱՅԻԳԱՐ ԱԶ ԹԵԳՄԱՆ ԴԵՄ ՅԵՎ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒ- ՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Հաջող սոցիալիստական հարձակման համար վճռա-
կան պայմանը, վորի արդյունքներից մեկը հանդիսա-
նում է շրջադարձը դեպի թեթև արդյունաբերությու-
նը, յեղել և կուսակցության գլխավոր դժի հաղթանակը
թեքումների դեմ մզվող պայքարում։

Աջ ոստրտունիսաները, արտացոլելով կուլակային
գիրադարությունը սոցիալիստական հարձակմանը, փոր-
ձում ելին պայքարել ինդուստրացման և համատարած-
կուեկտիվացման քաղաքականության դեմ։ Նրանք ըրդ-
տում ելին հակադրելու թեթև ինդուստրիան ծանրին,
առարկելով ինդուստրացման բարձր տեմպերի դեմ,
պահանջելով թեթև արդյունաբերության ծավալումը
կապիտալ թիեզել արդյունաբերության կրծատման հաշվին։

Եթէնչ կլիներ, յեթե մենք լսեյինք ընկ, բուխարինի խըմ-
բակի աջ ոպորտունիսաներին, յեթե մենք հրաժարվեյինք հարձակութից, չեյինք կծկի ինդուստրիայի զարգացման
ամենը, չեյինք կանգնեցնի կուսանտեսությունների և խոր-
տնեսությունների զարգացումը և չեյինք հիմնվի անհա-
տական գյուղատնտեսության վրա։

Մենք անպայման կտապալեյինք մեր ինդուստրիան, կլոր-
ծանելինք դյուզատնտեսության սոցիալիստական վերակա-
ռուցման գործը, կմնայինք առանց հացի և կուլակության
ուժեղացման համար ճանապարհ հարթեյինք։ Մենք կնսե-
յինք կոտրած տաշտակի առաջ։

Եթէնչ կլիներ, յեթե մենք լսեյինք Տրոցկու-Զինովյեվի
խմբի «ձախ» ոպորտունիսաներին և հարձակման անցնելինք
1926/27 թվին, յեթե մենք վոչ մի հնարավորություն չու-
նեյինք կուլակային արտադրությունը կուտնտեսական և
խորհուտեսական արտադրությամբ փոխարինելու։

Մենք անպայման կտապալեյինք այդ գործում, կցուցա-
դրեյինք մեր թուլությունը, կուժեղացնեյինք կուլակության
և ընդհանրապես կապիտալիստական ելեմենտների գերքերը,
միջակին հարեյինք կուլակի գիրքը, կտապալեյինք մեր սո-

¹⁾ ԿԾԽ. 1928 թ. մայ 2-ց, եջ 95, 1928 թ.

ցիւլիստական ըմբարությունը և կմնայինք առանց չացի:
Մենք կնուելինք կոտրած տաշտակի առաջ:
Աբդյունքները նույնը կլինելին»: 1)

Ահա ինչու կուսակցությունը չդնաց այդ ճանապարհով: Պայքարելով աջ թեքման դիմ, վորպես տըլյալ ետապում զլիսալոր վտանդի, կուսակցությունն ամուր և անշեղ կերպով տարավ ծավալուն սոցիալիստական հարձակումն ըոլոր Փրոնտներում:

«Կասկած չի կարող լինել, վոր առանց զծուական պայքարի աջ թեքման գեմ, առանց նրա զեկավար ելեմնաների առանձնացման, մենք չենինք կարող ձեռք բերել կուսակցության ուժերի և բանվոր դասակարգի մորթիկացիան, չքառվորության ուժերի և գյուղացիական միջակ մասաների ժորիլիցացիան սոցիալիզմի ծալալուն հարձակման, խորհանուասությունների ու կուսակտությունների կազմակերպման, մեր ծանր արդյունաբերության վերականգնման և կուլակության, վորպես դասակարգի, լիկվիլացիայի գործի համար»: 2)

Թեթև արդյունաբերության արագայրած գարգացումը հնարավոր յեղավ միայն, վորպես հետեւանք Համեկ(բ)կ կենտկոմի կողմից հետեղականորեն անցկացրած ինդուստրացման և կուլակության, վորպես դասակարգի, համատարած կուլակության, վորպես վրա, լիկվիլացիայի քաղաքականության, միայն վորպես հնագամյակը չորս տարում, իսկ վորոշ վճռական ծյուղերում 3 ու նույնիսկ 2 և կես տարում, կատարելու հաջողությունների հետեւանք:

ՄԵՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՒՄՔԻ ՖՐՈՆՏՈՒՄ:

Արդեն 1930 թիվը թեթև արդյունաբերության համար հումքի առանձին տեսակների արտադրության

¹⁾ ՍՏԱԼԻՆ.—Համեկ(բ)կ կենտկոմի քաղաքական զեկուցումը XVI կուսակտություն:

²⁾ Նույն աեղը:

գործում նշանակալից բեկում տվեց. ըստ վորում այդ բեկումն ավելի նշանակալից յեղավ այն ըրջաններում և տեխնիկական կուլտուրաների այն տեսակների նկատմամբ, վորտեղ կորսնտեսությունների մեջ չքավորմիջակ տնտեսությունների ավելի մեծ տոկոսն և ընդուրկված:

Այս տեսակետից չատ ցուցադրական եւ չաքարի ճակնդեղի որինակը: Նրա ցանքը 1930 թ. կազմում եր 1.140 հազար հեկտար—այն ժամանակ, յերբ 1929 թ. ցանքած եր միայն 783 հազար հեկտար: Անը հավասար է 41%-ի, իսկ 1929 թ. չաքարի ճակնդեղի ցանքն աճել է միայն 2%-ով: Ցանքի տարածության նման բարձր աճ հնարավոր յեղավ միայն նրա համար, վորովհետեւ ցանքի համարյա 2/3-ը (63%) կոլտնտեսությունների և խորհանտեսությունների բաժինն եր: Ճակնդեղ ցանող տնտեսությունների այդ վճռական ըրջադրձը դեպէ սոցիալիզմի ուղին՝ 1930/31 թ. կամպանիայում ապահովեց 17,7 միլիոն ցենտներ շաքար արտադրելը, վորն ամելի քան յերկու անգամ գերազանցում և նախորդ տարվա շաքարի արտադրությանը և 20%-ով ավելի յեմինչպատերազմյան չափից:

Բամբակի ցանքերը 1930 թվին դրավել են 1,579 հազար հեկտար, այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ համարյա մեկուկես անգամ ընդարձակվել են: Բայց վորում 1929 թվին բամբակի ցանքի տարածությունը մեծացել է միայն 14%-ով: Տարբերությունը չատ խոշոր է: Այս հիմնականում բացատրվում նրանով, վոր 1929 թվին կուսակտությունների և խորհանտեսությունների բաժինը ցանքի ամբողջ տարածության 7,9%-ն եր, իսկ 1930 թ.—արդեն 42%-ը (խորհանտեսություններ 4,6%, իսկ կուսակտությունները՝ 37,4%):

1930 թվին հումք-բամբակի ընդհանուր հավաքը կազմում եր 13,5 միլիոն ցենտներ—1929 թ. 8,6 միլիոնի գիւղաց:

1931 թվի գարնանացանի կամպանիան. համարյա

բոլոր հումքային կուլտուրաների և ավելի բարձր վե-
րելք և տալիս: XVI կուսամագումարը դիրեկտով և
ավել:

«Բանվորական և գյուղացիական լայն մասսաների պա-
հանջների աճը և նրանց կյանքի նյութական ու կուլտու-
րական ժակարտակի սիստեմատիկ բարձրացման խնդիրը մի-
կողմից, թեթև արդյունաբերության ճյուղերի զարգացման
հնարակորությունը սահմանափակող գյուղատնտեսական
հումքային բազայի անբավարարությունը մյուս կողմից պա-
հանջում են, վոր միացած յերեք տարվա ընթացքում հիմնա-
կանում ապահովվի գյուղատնտեսական հումք մշակող ար-
դյունաբերության անկախությունն արտասահմանյան շուկա-
յից և ԽՍՀՄ արդյունաբերության հումքային բազան հասցվի
այսպիսի մակարդակի, վորն ապահովվի հնդամյա պլանի
լին կատարումը և մաքսիմալ չափով ծանրաբեռնի թեթև
ինդուստրիայի համապատասխան ճյուղերի գոյություն ունե-
ցող սարքավորումը»:¹⁾

Ընթացիկ տարին վճռական տարի յէ հանդիսանուած
հումքային անկախության և թեթև արդյունաբերու-
թյունը հումքով լիովին ապահովվելու պայքարում:

Այդ պայքարի հաջողության գրավականը հումքա-
յին շրջաններում կոլտնտեսությունների ուժեղ աճի
մեջն և կայանում: Համեկ(բ)կ կենտրոնի և կվ.Հ.-ի 1930
թվի դեկտեմբերյան միացյալ պլենումը դիրեկտով և
տվել: «Բամբակացան և ճակնդեղի շրջաններում ապա-
հովել տնտեսությունների ընդհանուր թղի 50%-ից վաչ
պակասի ընդունելու կոլտնտեսություններում»:

Դա նախորդ արդեն գերակատարված է:

«Բամբակի և ճակնդեղի վճռական շրջաններում (Ռուբեկըս-
տանի, կազակստանի, Թուրքմենստանի և Աղրբէջանի բար-
բակացան շրջաններում և Կենտրոնական Սևահող մարզում
և Ռուբայինայի ճակնդեղ շահող շրջաններում) կոլեկտիվե-

1) Համեկ(բ)կ XVI համագումարի բանաձեռ «Արդյունաբերու-
թյան հնդամյա պլանի կատարման մասին»:

ըրւմ միացել են անտեսությունների 50% -ից ավելին և
զուղացիական ցանքի ավելի քան 60% -ը»:¹⁾

Վուշ ցանող շրջանները նույնական գերակատարե-
ցին դեկտեմբերյան սլենումի առաջարկանքը—սպա-
ռողական շրջանների չքավորմիջակ տնտեսություննե-
րի 25%-ի ընդունումը կոլտնտեսական շարժման մեջ:

ԲԱՄԲԱԿ

Ընթացիկ տարում 2,357 հազար հեկտար բամբակ
և ցանքած, դա 50%-ով ավելի յէ քան անցյալ տարվա
ցանքը: Յանքի տարածությունն ավելի քան յերեք ան-
գամ գերադանցում և մինչպատերազմյան չափը: Յան-
քի տարածության 64%-ը կոլտնտեսություններին և
պատկանում: Բամբակացան խորհնտեսությունները
բոնում են ցանքի ամբողջ տարածության 8.1%-ը:
Յանքի տարածության հոկայական աճ տվին Ուկրայի-
նայի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի և Ստորին Վոլ-
գայի նոր բամբակացան շրջանները:

Բամբակացան շրջաններում, բացի գոյություն ու-
նեցող 19 մէքենա-տրակտորային կայաններից՝ կադ-
մակերպվում են 130 նոր ՄՏ՝ կայաններ: Բամբակի
ցանքի ամբողջ տարածության ավելի քան 3/4-ը հերկ-
ված ե տրակտորներով: Մեքենաներով հերկված ե ամ-
բողջ տարածության ինը տասերորդական մասը: Բայց
չե՞ վոր դեռ 1929 թ. նույնիսկ գութանը միանդամայն
հաղվագյուտ յերևույթ եր բամբակի դաշտերում:

Բամբակացան շրջանների առաջ ինդիր ե դրված—
20—25%-ով բարձրացնել բամբակի բերքատվությու-
նը: Այդ բոլորը պետք ե ապահովվի թելի չտեսնված
հավաք: Հնդամյա պլանով նախատեսված եր 1932 թ.
ստանալ 590 հազար տոնն բամբակի թել: Կուսակցու-
թյան կենտրոնն իր 1929 թ. հուլիսի 18-ի վորոշումով
այդ առաջարկանքն անբավարար դատավ, «վորպեսզի

1) Համեկ(բ)կ կկ հունիւյտն պլենումի բանաձեռ «Յանքի նախ-
նական հանրագումարի և բերքահավաքի կամունկայի խնդիրների
մասին»:

Հնդամյակի վերջում Միության տեքստիլ արդյունա-
բերությունը վոչ միայն աղատագրվի արտասահմանից
ներմուծվող բամբակից, այլև ունենա անհրաժեշտ
պահանձ՝ տեքստիլ արդյունաբերության հետագա ծա-
վալման համար»։ Կենտրոնը խնդիր առաջադրեց—
1932 թվին 787 հազար տոնն բամբակի թել ստանալուն
հասնել։ Արդեն ընթացիկ տարում մենք կարող ենք
փաստացիրեն 550—600 հազար տոնն բամբակի քել
ստանալ։

Մինչև անցյալ տարի մեր բամբակագործական ար-
դյունաբերությունը միշտ էացվու 45% իմպորտային
(արտասահմանից ներմուծվող) բամբակ եր գործա-
ծում։ Իսկ արդեն հաջորդ տարում մենք ամրագու-
րյամբ կազմակերպ իմպորտից և հնարավորություն-
կունենանք նշանակալից չափով ծավալելու կոորեղենի
արտադրությունը։

Արդյուն իրականացվում և բամբակի անկախության
համար մշտով պայքարի խնդիրը։

ՎՈՒՇ ՅԵՎ ԿԱՆԵՓ

Վուշի ցանքի տարածությունն ընթացիկ տարում
կազմում է 3,030 հազար հեկտար, վորն 35 տոկոսով
ավելի յեղան անցյալ տարվանը։

Կանեփի ցանքն ընդարձակվել է 22,8 տկոսով։ Այդ
կուլտուրայից ընթացիկ տարում ցանված է ավելի քան
920 հազար հեկտար։ Ընթացիկ տարում կոլտնտեսու-
թյուններն արգեն ընդգրկել են վուշի ցանքի ամբողջ
տարածության 55,5 տոկոսը, իսկ կանեփի՝ 47 տոկոսը։

Վուշ-կանեփի շրջաններում ընթացիկ տարում
կազմակերպվում են 150 մեքենա-տրակտորային կայան-
ներ և 489 թելախուրձի նախնական մշակման նոր գոր-
ծարաններ։ Արդյունաբերությունը վուշ ցանող տնտե-
սություններին տալիս է 10 հազար վուշ գորող գործիք-
ներ։ Այսպիսով վուշագործության և կանեփագործու-
թյան աելնելիքական ըազան աղակովում և, վորը հնա-

բավորություն կտա մաքսիմալ չափով մեքենայացնելու
դյուղատնտեսության այդ կարելորագույն ճյուղը։

Վուշ ու կանեփ ցանող կոլտնտեսությունների ու
խորհունտեսությունների ամը, նրանց նոր տեխնիկայով
ակառապեսնումը կստեղծի անհրաժեշտ պայմաններ
վուշ-կանեփագործական արդյունաբերության ուժեղ
զարգացման համար, վորը մինչեւ վերջին տարիներս
արհեստականորեն արգելակվում եր վնասարարների
կողմից։

Իերքատվությունը պլանով նախատեսնված չափով
բարձրացնելու պայմանում վուշի թելախուրձի անդ-
րանքային մթերումը կդերագնացի հինգ միլ. ցենանե-
րի, իսկ կանեփինը՝ 2,5 միլ. ցենաների։ Իսկ դա թույլ
կտա հումքով մովին բեռնելու վուշի արդյունաբերու-
թյունը։

ՆՈՐ ՏԵՔՍՏԻԼԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐ

Բամբակն ու վուշը տեքստիլային հիմնական կուլտու-
րաներն են։ Դրանցով և կենդանական ծաղման թելով
—բուրդով ու մետաքսով—մինչև վերջին ժամանակներս
սպառվում եր տեքստիլ արդյունաբերության ամբողջ
հումքային մատակարարումը։ Այնինչ, հումքային ան-
կախության պայքարը և թելեւ արդյունաբերության
արագ զարգացման խնդիրն առաջ են բաշխմ նոր տեսա-
կի հումքի սուրսպառների (փոխանակութ) լայն ոգա-
գործման անհրաժեշտությունը։ Վնասարարներն
ամեն կերպ ձգտում ենին արգելակել նոր տեքստի-
լային կուլտուրաների զարգացումը։ Ատելայն, չնայած
վնասարարության, չնայած ոպորտունիտական բթու-
թյան վորն արգելակում եր հումքի նոր տեսակների ոգ-
տագործումը, մենք այդ բնագավառում հասկ ենք նշա-
նակալից, թեև, ճիշտ է, զեր վոչ բավարար արդյունք-
ների։

Նոր տեքստիլային կուլտուրաների ամենակարևոր տե-
սակներից մեկը հանդիսանում է քենդարիը (Կենդարի)։
Կազմակատանում և Միջին Ասիայում կիսաճահճու գե-

տափերում կան քենդիրի մեծ թիւուտներ : Նրա կեղեցից, մշակման հասուն ձևերով, ստացվում ե թել—քենդիրին—վորը փոխարինում ե բրդին ու բամբակին : Վայրի քենդիրի սպառագործումը կապված է մեծ գժվարությունների հետ : Դրա համար ել հումքի այլ նոր տեսակի ոգտագործման հիմնական ուղին—կուլտուրական պլանտացիաների ստեղծումն ե : Ընթացիկ տարում աղաղակի պլանտացիաներով կրոնի 40 հազար հեկտար տարածություն :

Տիքատիլային կուլտուրայի ուրիշ նոր տեսակը, կենափը, կփոխարինի ներմուծվող ջուլին—սլարան և պարկեր արտադրելու համար :

Հատուկ հետաքրքրության արժանի յե Անդրկովկասում աճող սամին : Խամբի թելը կարող է փոխարինել յեղիսկտական բամբակին : 1931 թվին սամիի ցանքի տարածությունը 3 հազար հեկտար է :

ՍՆՆԴԻ ՀՈՒՄՔ

Ընթացիկ տարում նշանակալից չափով կընդարձակվեն ձիթատու կուլտուրաների ցանքերը : 1930 թ. այդ կուլտուրաները գրավում են 8.5 միլ. հեկտար տարածություն, 1931 թ.—12 միլ. հեկտար : Այսպիսի ցանքի տարածությունն ավելանում է մեկ ու կես անգամ : 32 տոկոսով բնդարձակվել ե կարելիքորագույն ձիթատու կուլտուրայի—արեգածաղկի ցանքը : Բայ վորում ցանքի 85 տոկոսն ընդդրկված է կոլտնտեսություններում :

35 տոկոսով կընդարձակվի վուշի հունդի ցանքը, 70 տոկոսով—զենազերչակի, 36 տոկոսով—սոյայի և այն :

Ընթացիկ տարում առաջին անգամ սկսում ենք ձիթատու կուլտուրաների խոչոր կուլտնաեսությունների կազմակերպումը : Այդ նպատակով Հողժողկոմատը կաղմակերպում է հատուկ տրեստ, վորը 1932 թ. կցանի մոտավորապես 1.5 միլիոն հեկտար ձիթատու և յեթերատու կուլտուրաներ :

Անցյալ տարին հոչակվեց չաքարի արդյունաբերության հումքի բազայի բացառիկ վերելքով : Այդ վերելքը շարունակվում է և այս տարի : 1930 թ. ցանքել ավելի քան 1.140 հազար հեկտար ճակնդեղ : Ընթացիկ տարում ցանքել է 1.494 հազար հեկտար (30,7 տոկոս աճ) :

Անցյալ տարի չաքարի ճակնդեղի ցանքի 63 տոկոսը պատկանում էր կուլտնաեսություններին և խորհունտեսություններին : Այս տարի արդեն համայնացրած սեւ տորը զրավում է ամբողջ ցանքի 73,9 տոկոսը : Այսպիսի յեն յերկրորդ բայցիկյան գարնան նվաճումները, վոր ամուռ բազա յեն ստեղծում թեթև արդյունաբերության զարգացման համար —

«Միայն թե անցյալ տարվա փորձը ցույց է տալիս, վոր հանդուսանալ կուեկուիտցման ու ցանքի կամպանիայի հաջողություններով ու թերազնահատել կուլտնաեսությունների ամրացման ու բերքահավաքի բնագավառների խնդիրների ամբողջ լրջությունը, նշանակում է խոշոր վիճա հասցնել կուեկուիտցման դորձին» : ¹⁾

Համ. կ(ր)կ կենտկոմի Հունիսյան պլենումի վորոշումների հիման վրա բայցիկյան պայքարը տեխնիկական կուլտուրաների համար պետք է ապահովի գառնանցանի կամպանիայի նվաճումների լրիվ ոգտագործմը :

«...Տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի գործում անդյալ տարի խոչոր կորուստներ ունեցանք, վորոնք առաջ ենին յեկել բերքահավաքի կամպանիայի վատ կազմակերպումից՝ բերքահավաքի մեջենայացման բացարձակ բացակայության պայմաններում» : ²⁾

Կենտկոմի պլենումը մի շարք ուրեկտիվներ և տիեզերունք պետք է ոժանդակեն տեխնիկական կուլտուրա-

¹⁾ Համեկ(ր)կ հունիսյան պլենումի բանաձեռ «Ցանքի նախատեսման հաղամյակի և բերքահավաքի կամպանիայի խնդիրների մասին» :

²⁾ Նույն տեղ :


ների բերքահավաքի կորուստների վերտցմանը՝ աշխատանքի մտածված կազմակերպումն, գործավարձ, կոլտնտեսականի աշխատանքի հեշտացման հասարակ ձևվերի ողտադործումը, արդյունաբերական ապրանքների և հայրի ժամանակին հասցնելը և այլն:

ՄԵՐԵՆԱՅԱՅՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽԸՆ-
ԴԻՐՆ Ե

Հումքի բաղայի ամրացման բնագավառում կարե-
փորագույն խնդիրը տեխնիկական կուլտուրաների ցա-
նելու, հատկապես մշակման և բերքահավաքի բոլոր
պրոցեսների մեջենայացումը պետք և լինի: Մեքենա-
յացումը ցանքի տարածության հետագա ընդարձակման
և բերքատվության բարձրացման հիմքն և: Տեխնիկա-
կան կուլտուրաները—ամենաշատ աշխատունակ (այ-
սինքն ամենից ավելի աշխատանք պահանջող) կուլտու-
րաներն են գյուղատնտեսության մեջ: Արդեն անցյալ
տարի բամբակի և հատկապես ճակնդեղի բերքահավա-
քի ժամանակի բանութիւնից հարկադրված
ելինք դեմ առ դեմ կանգնելու չափ լուրջ դժվարու-
թյունների առաջ:

Մեծագույն ջանքերի դնուի հաջողվեց ամբողջու-
թյամբ համարել և գործարանները տեղափոխել ամբողջ
ճակնդեղը:

Անցյալ տարի վուշի շրջաններում չկարողացան
վերջացնել վուշի նախնական մշակումը և մեծ քանակու-
թյամբ վուշի ցողուններ մնացին առանց թակելու: Ահա
ինչու վուշագործության համար բացառիկ նշանակու-
թյուն ունի կուսակցության և կառավարության վորո-
շումը՝ բնթացիկ տարում վուշի և կանեփի նախնական
մշակման նոր 489 գործարաններ կառուցելու մասին: Այդ
գործարանները հնարավորություն կտան մշակելու վու-
շի ամբողջ բերքի ½-ը, իսկ կանեփի՝ ¼-ը: Յեթե հի-
շնք, վոր անցյալ տարի գոյություն ունեցող նախնա-
կան մշակման գործարաններն ապահովում երին վուշի
ամբողջ բերքի 4 %-ի և կանեփի՝ 1 %-ի մշակումը մե-



Խորորդային շինուածք տուրքինի մոնտաժը (վուշի
ախնական մշակման մեջնա) կաշինի անվան վուշի
գործարանում— 1931 թ. կառուցվող 489 վուշի գոր-
ծարաններից մեկամ:

այն, հասկանալի կլինի, թե մեքենայացման բնադավառում ինչպիսի հեղաշրջումն առաջ կդա և թե վուշագործ կոլտնտեսություններին ինչպիսի խոչը ողնություն ցույց կտան այդ նոր 489 գործարանները:

Գետք ե բայլշելիկորեն պայքարել այդ գործարանների ժամանակին գործի զցելու համար: Դրանք բոլորն ել գործի պիտի զցվեն մինչև 1932 թվի հունվարի 1-ը: Մինչդեռ մի շաբթ շրջաններում այդ գործարանների կառուցումն անբավարար ե ընթանում (Բելոտուսիա, Կենտրոնական Սևահող շրջան, Արևմտյան և Արևվելյան Սիրիր), ըստ վորում հատիկալես անմիջիթար ե սարքավորման հարցը: Մեքենաշինարարական գործարաններն և արդյունաբերական կոռպավերացիայի կազմակերպությունները պետք ե լրիվ և ժամկետին պատրաստեն վուշի գործարումը: Պիտք ե նույնպես ուժեղացնել շինարարական աշխատանքների տեմպերը և բարձրացնել նրանց գորակը:

Մեր տեխնիկական միտքը վուշի և կանեփի նախնական մշակման մեքենայացման նոր ուղիներ և առաջադրում: Տեքստիլ արդյունաբերության դիտական-հետազոտական ինստիտուտը (ՀԱՏԻ—ՏԱԳՀ) հորինել ե մի մեքենա—զեկորտիկատոր—վորը հնարավորություն և տալիս կեղեն առանձնացնելու չոր ցողունից (չթրջելով ցողունը): Գտնված ե նույնպես կանաչ կեղեվն ազնվացնելու և նրանից սովորական միջոցով ստացված թելից վոչ պակաս վորակի թել ստանայում ձեզ: Այս գյուտը խոստանում է խակական հեղափոխություն առաջ բերել վուշի արդյունաբերության մեջ: Գետք ե արագացնել գործարանային պրակտիկայում մշակման նոր ձևերի և նոր մեքենաների ստուգման հետ կապված աշխատանքները, պետք ե սկսել զեկորտիկատորների պատրաստումը, վորտիկալի հաջորդ տարի հնարավոր լինի այդ նոր յեղանակով մշակելու բերքի նշանակալից մասը: Բայց արագացնելով նոր յեղանակների կիրառումը, չի կարելի վոչ մի բովի քուլացնել նախանական մշակման գործարանների շինարարության տեմպերը: Դրա հետ միասին կոլտնտեսություններում այն-

պես պետք ե կազմակերպել ձեռքի աշխատանքը, վորագործի սեփական բերքն իր ժամանակին քակելու բոլոր հնարավորությունները լրիվ սոցիալորժվեն:

Մենք մի շաբթ ուրիշ տեխնիկական բույսերի մշակման մեքենայացման բնադավառուներում: Միայն թե այդ նվաճումները գեռ միանդամայն անբավարար են: Սոցիալիստական հումքային խոչը տնտեսությունը, համեմատած մանր անհատական տնտեսությունների հետ, աշխատանքի արտադրողականության բարձրացման անընդապան հնարավորություններ ունի: Այդ բարձրացումը մասամբ ձեռքը և բերվում աշխատանքի ուղիղ կազմակերպման չնորհնիվ, վորն անհնարին ե մանր տնտեսության մեջ, իսկ գլխավորապես չնորհնիվ նոր տեխնիկայի և հատկապես լայն դարձացած մեքենայացման:

«Աշխատանքի պրոցեսների մեքենայացումը մեզ համար հանդիսանում ե այն նոր և վճռական ուժը, առանց վորի անհնարին և պահպանել վոչ մեր տեմպերը և վոչ ել աբտագործյան մասշտաբները»:¹⁾

Մեքենայացումը հնարավորություն և տալիս մշակելու և բերելու համարական տարածություններից, մեքենայացումը վերածում ե՝ համատարած կոլտնտեսությունն ուղիներով հետագա հառաջընթացություն՝ շարժիչ ուժի: Վերջապես մեքենայացումը հեշտացնում է կոլտնտեսականի ու խորհունտեսության բանավորի ծանր աշխատանքը, այն դարձնելով սոցիալիստական աշխատանքը:

«... Ինչքան ավելի արագ մենք շարժվենք արտադրության մեքենայացման բնադավառում, այնքան ավելի ու ավելի աշխատանքը կընդունի սոցիալիստական բնույթ»:²⁾

Բանութի պակասությունը, յերկում գործադրկու-

1) ԱՍԱԼԻՆ.—Նոր վրություն—տնտեսական շինարարության նոր խորհրդներ:

2) Վ. Վ. Կույրիչեւ.—Հնդամյակի յերբորդ տարվա ժողովը դական անտեսության պլանը:

թյան լրիվ լիկիդացիայի պայմաններում, կարեսրառույն անտեսա-ջաղաքական խնդիրների թվում հատուկ սրությամբ դնում և մեծ աշխատանք պահանջող պրոցեսների մեքենայացումը: Գյուղատնտեսության մեջ, մասնավորապես տեխնիկական կուլտուրաների մշակման ու բերքահավաքի գործում, մեքենայացումը վոչ միայն սոցիալիստական խոշոր անտեսության հետագա ծավալ-ման հիմնապահ ուղին ե, այլև բանումի ավելցուկի արդաման միջոց՝ արդյունաբերական բանվորության նոր կազմեր ստեղծելու համար:

Պայքարի լույլ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման համար, միաժամանակ պետք ե հիշել, վոր—

«... Բոլոր տեսակի տեխնիկական կուլտուրաների ապրան-քային արտադրանքի նշանակալից աճի և նրա բերքահավաքի ու նախնական մշակման նոր սկզբող մեքենայացման դեպ-քում, նորից, այս տարի, աշխատանքների հիմնական մասը կատարվելու յէ ձեռքով և ձիռ ուժով»:¹⁾

Դրա համար ել ամենալորջ խնդիրը հանդիսանում է աշխատանքի ուղղիդ կազմակերպումը գործավարքի իրա-կանացման հիման վրա, հալասարեցման և դիմազրո-կության լիկիդացիան:

ՊԱՅՔԱՐ ՀՈՒՄՔԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հումքային բազայի հոգոր վերելիքն ընթացիկ տա-րում արդեն նշանակալից չափով կավելացնի թեթև ար-դյունաբերության զորություն առնեցող սարքավորման բեռնվածությունը: Միայն թե այդ վերելքը վճռական ազդեցություն կդորձի վոչ այնքան այս տարիքա արտա-դրության վրա (նոր հումքը Փարբեկա կահանի միայն այս տարիքա վերջում), վորքան 1932 թ. արտադրու-թյան վրա: Այնուամնայնիվ, ընթացիկ տարում թե-

¹⁾ Համեմ (ր)կ կի Հունիսյան պլենումի բանաձեւը «Ցանքի նախ-նական հանբառումարի և բերքահավաքի կամպանիայի խնդիրների մասին»:

թե արդյունաբերությունը հնարավորությաւններ ունի արտադրությունը ծավալելու այնպիսի սահմաններում, վորոնք գերազանցում են 1930 թ. արտադրությանը: Այդ բանի համար հարկավոր և վճռական բնկումն առա-ջացնել հումքի նոր տեսակների և սուրոգատների ոգ-տագործման մեջ:

Հումքի նոր տեսակները և սուրոգատները հատուկ կարենոր նշանակություն ունեն թեթև արդյունաբերու-թյան այն ճյուղերի համար, վորոնք աշխատում են կեն-դանական ծաղման հումքի վրա:

Այդպիսի ճյուղերից ամենալավ հումքային դրու-թյուն ունի մետախի արդյունաբերությունը: Արդյու-նաբերության այդ ճյուղի հումքը բազան արագ քայ-լերով զարգանում է:

Շերամալաշությունը տարածվում է նոր շրջաննե-ռում: Առաջ նա միայն զարգացած եր Անդրկովկասում և Միջին Ասիայում: բայց թթենիներ, վարոնց տերեկով կերակրվում են չերամի թթունները, կարող են բնել ու աճել նաև Ուկրայինացում, Ղրիմում, Հյուսիսային կովկասում և դեռ ալիքի հյուսիսում: Թթենին հարկավոր ե վոչ միայն շերամապահության համար: Վերջին ժա-մանակներս գտնված ե, վոր թթից կարելի յէ թել ստա-նալ, վորը կարելի յէ ոդտագործել բրդադրուժական և բամբակագործական արդյունաբերության մեջ: ԿվՃ-ԲԳԾ-ն անհրաժեշտ ե գտել արդեն 1931 թ. սկսելու այդ նոր տեքստիլային հումքի ոգտագործումը: Հողդողկո-մատին առաջարկված ե մաքսիմալ չափով ընդարձակելու թթենիների տնկումը և արդեն 1931 թվին տնկել 63 հա-զար հեկտար տարածություն, իսկ 1932 թ. վոչ պակաս քան 108 հազար հեկտար:

Մետաքսեղենի արտադրության համար բնական մե-տաքսը հումքի միակ տեսակը չէ: Վերջին տասնամյա-կում արտասահմանում զարգացել ե արդյունաբերու-թյան մի նոր տեսակ—արհետական մետաքսի արտա-դրությունը: Այդ արտադրության համար սկզբնական նյութ ե ծառայում փայտի շիճուկից (древесина)

ստացվող ցելյուլոզը : Կապիտալիստական յերկրներում պատերազմից հետո լայն ծավալի եւ արհեստական մետաքսի արտադրությունը : 1913 թ. արհեստական մետաքսի համաշխարհային արտադրությունը 11 հազար տոնն էր կազմում, իսկ 1925 թ. այդ քանակն աճել է մինչև 84 հազար տոննի : 1929 թ. ամբողջ աշխարհում արտադրվել է 198,7 հազար տոնն արհեստական մետաքս, բայց արդեն 1930 թ. տնտեսական ճղնաժամի աղդեցության տակ արհեստական մետաքսի արտադրանքը կրնաւլի եւ համարյա 7 % -ով, իսկ ընթացիկ տարում շարունակվում է նրա հետագա սղմումը : ԽՍՀՄ -ում ընդհանական տարեց-տարի անում եւ այդ նոր արտադրությունը :

Մինչ հեղափոխությունը մեզ մոտ արհեստական թերի և վոչ մի ֆարբիկա չկար, յեթե չհաշվենք վոռքիկ կիսատնախազործական «Վիսկովա» ֆարբիկան : Այժմ մեզ մոտ արդեն աշխատում են յերկու նոր գործարաններ : «Վիսկովա» - ն արմատապես վերակառուցվել է : Ընթացիկ տարում դորձի յեւ գովում յերրորդ նոր ֆարբիկան, իսկ առաջին յերկուսն ընդարձակվում են մինչև իրենց ամբողջ կարողությունը :

1930 թ. մեր ֆարբիկաները բաց են թողել 838 տոնն արհեստական թել, ընթացիկ տարում՝ արտադրանքը կհասնի 22 հազար տոննի : 1932 թ. Հունվարի 1-ին մեր արհեստական մետաքսի ֆարբիկաների կարողությունը կհասցվի մինչև 45 հազար տոնն արտադրանքի :

Եթե նույնիսկ յենթարենք, վոր կապիտալիստական յերկրներում արհեստական մետաքսի արտադրությունը կմնա 1930 թ. մակարդակին (իսկ նա իրականության մեջ շարունակում է ընկնել), ապա այդ դեպքում ել մինչը 1932 թ. կանցնենք յեվրոպական յերկրներից և կզիջնենք միայն ՀԱՄՆ-ին (Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին), վորոնք 1930 թ. 54,5 հազար տոնն արհեստական մետաքս են արտադրել : Ընթացիկ տարում արհեստական մետաքսի արտադրության ասպարիզում (իսկ այդ արտադրությունը կարելա-

գույն նշանակություն ունի վոչ միայն տեքստիլ արդյունաբերության համար, այլև նաև յերկրի պաշտպանության համար) մենք կդրավենք Յ-րդ կամ Գ-րդ տեղն աշխարհում — անցնելով ճապոնիային, Գերմանիային, Ֆրանսիային, հավանական և Անդիային :

Բավականին վատ դրության մեջ եւ գտնվում բրդագործական արդյունաբերությունը, վորը նույնպես կնեղանական ծագման հումք եւ ողտագործում : Յեզ մինչև պատերազմին ել բրդագործական արդյունաբերության հումքը բարձր բազան միանդամայն անբավարար եր Ռուսաստանում : Բրդագործական արդյունաբերությունը նշանակալից չափով իր գոյությունը պահպանում էր ի հաջով ներմուծվող բրդի հատկապես ներմուծվող նուրբ, մերինույան բրդի : Վորպես հետևանք իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների վոչխարաբուծությունը միանդամայն քայլքայլեց : 1922 թ. հասարակ բուրդ ունեցող վոչխարների քանակը կազմում էր, 1916 թվի համեմատությամբ, 43 % միայն, իսկ 1928 թ. նա արդեն այդ քանակի 122 % -ին հասավ : Իսկ մերինույան վոչխարների թիվը, նույնիսկ 1929 թվին, համարյա 4 ½ անգամ պակաս էր, քան 1916 թվին :

1930 թ. գարնան, կուլակության կատաղի պայքարը կոլեկտիվացման դեմ՝ նշանակալից չափով կրծատեց վոչխարների հոտի քանակը : Միքանի հաշվառումների համաձայն նա կրծատվել է 35 % -ով : Յեթե դրան ավելացնենք մանր անհատական վոչխարաբուծական տնտեսության շատ թույլ ապրանքայնությունը և գյուղացիական անտեսություններում մեծ քանակով բուրդ մնան ապա հասկանալի կրառունա այն հումքը կազմությունները, վորն ապրում է բրդագործական արդյունաբերությունը :

Կուսակցությունը դրել է և հաջող կերպով լուծում եւ անասնաբուծության պրօլետը : Անասնաբուծական խորհուտեսությունների շինարարությունը և կոլտնտեսություններում համայնացրած ուժեղ հոտի ստեղծումը միաժամանակ լուծում են թե բանվորությանը միս ու

կաթնամթերք մատակարարելու խնդիրը և թե բրդա-
գործական ու կաշեգործական արդյունաբերությանը
հումք մատակարարելու խնդիրը:

Բավական ե ասել, վոր «Ավցելող» տրեստն ընթա-
ցիկ տարրում իր խորհանուսություններում կունենա մին-
չե 4,8 միլիոն վոչխար, իսկ 1933 թ. նրա հուր կհասց-
վի մինչեւ 18 միլիոն վոչխարի: «Սկոտովոդ»-ը խոշոր
յեղջերավոր անասունների քանակն ընթացիկ տարվա
2,8 միլ. գլխից 1933 թ. կհասցնի 7 միլ. գլխի: «Ավի-
նովոդ» տրեստի տնտեսություններում 1931 թ. խոզերի
քանակը կկազմի 1,9 միլիոն, իսկ 1933 թ.՝ արդեն 6,3
միլիոն: Վոչխարի համայնացրած հոտի, խոշոր յեղջե-
Առաջին կիսամյակում ոեզինի արդյունաբերությունը գերակատարել է պլանը (մասնավորապես կրկնակոչեկի արտադրանքը՝ 6%-ով)։ Հումքի գրության բարելավման հետ կազմած ոեզինի միավորումը նշանակալից չափով ավելացրել է յերկրորդ կիսամյակի պլանը։ Յերկրորդ կիսամյակում ոեզինի արդյունաբերության ընդհանուր արտադրանոր 11/օ անուամ կցերացանցի նախնական պլանը։ Մասնավորապես կրկնակոչեկի նկատմամբ պլանն ավելացված է Լենինգրադի կոմբինատում 15,9 միլ. գույգով, իսկ «Կրասնի Բոգատիկում»՝ 6 միլ. գույգով։

Սակայն ուսղինի արդյունաբերության աշխատանքը յերկրորդ կիսամյակի առաջին ամիսներում չի կարելի բավարար ճանաչել։ Ճիշտ և, արտադրանքի բանակն ա-

թում ե, ուղինե կոչիկների արտադրությունն սպառու
ամսին անցյալ տարվա համեմատությամբ աճել է 80
%-ով, բայց նա գեռևս հետ ե մնում պլանից: Ողոտոս-
յան պլանը միայն 77 %-ով ե կատարված: Էնկ. Ստա-
վնի ցուցմունքներին համապատասխան ապահովելով
աշխատանքի ճիշտ կազմակերպումը, ուղինի արդյու-
նաբերությունը պետք է իր պլանը կատարի:

0-840

Մասսաների աճող կուլտուրական պահանջներին սպասարկող արդյունաբերության հյուզերի մեջ հարապի արդյունաբերությունն ամենահետամնացն է հանդիսանում :

Մինչև այժմ ոճառի արտադրության զարգացումն արդեկակվում եր հումքի պակասով մինառի արտադրության հիմնական հումքը՝ բուսայուղն եւ Զիթահան արդյունաբերության արտադրանքը դեռ հեռու յէ ժողովրդի պահանջներին բավարարելուց։ Դրա համար եւ ոճառադրությունը չի կարողացել բավարար քանակով հումք ստանալ։ Ահա թե ինչու 1930 թվին և 1931 թվի սկզբում ոճառադրությունը բեռնավորված և յեղել վոչ ավելի քան 50-60 %։ 1931 թ. Հսկիչ թվերով զել վոչ ավելի քան 50-60 %։ 1931 թ. Հսկիչ թվերով ընթացիկ տարում ոճառի արտադրությունը պիտի կազմեր 260 հազար տոնն։ Այդ առաջադրանքը բացարձակականին անբավարար եր վոչ միայն բնակչության պահանջների համեմատությամբ, այլ նաև այն հնարավորությունների համեմատությամբ, վորն ունի ճարպի արդյունաբերությունը հումքի նոր տեսակների և սուրոցատների կիրառման բնառավագում։ Քեյներով տարուրեց, կառավարությունը վերաքննեց ճարպի արդյունաբերության պլանը և 1931 թվի ոճառի արտադրությունները բավարար տվենի առևտնական ծրագրի շրջան ծրագրը վորոշեց 500 հազար տվենի առևտնական ծրագրում, վորը, համեմատությամբ անցյալ տարվա հետ, ավելի քան մեկուկես անգամ մեծ ե։ Հստ վորում ոճառադրական արդյունաբերության մատակարարումը

բուսայուղերսվ պետք է ավելանա միայն 18-19% -ով:

Այսպիսով թեթև արդյունաբերության նաև այս ճյուղում սուր կերպով գրվում և սննդատու ճարպին փոխարինող հումքի նոր տեսակների հարցը : -Գարպապիուսի (կանիքոլի), ողբարձործված ճարպի, ձկան և ծովային կենդանիների ճարպի, միլոնավթի և այլն : Միայն թե մի շաբաթ կազմակերպություններ մինչև վերջին ժամանակներ դեռ անհրաժեշտ միջոցների չեն գիտել, վորպեսզի կատարեն այդ վորոշումը :

Հումքի կարևորագույն տեսակներից մեկը հանդիպահում է միջնավթը, զորն ստացվում է նավթարդյունաբերությունից, վորածն մնացորդ նավթի գտման: Բնաթացիկ տարում նավթարդյունաբերությունը պետք է տա վոչ պակաս քան 25 հազար տոնն մկրոնակի:

Անտառանյութերի քիմիական արդյունաբերությունը ճարպի արդյունաբերությանը պետք է 60 հաշվար առնն զարպիուս տա, վիզը նույնպես բուսայուղերին փոխարինող հումքի կարևորագույն անսակն է հանդիպանում:

Ճարպի արդյունաբերությունը վոչ պակաս քան 20
ազգար տոնն հումք պետք է ստանա «Սայուզոփիրից»:
Ենք մեծ հնարավորություններ ունենք ծովային կեն-
անիների ճարպի արտադրությունը զարգացնելու:
Երջապես ձենաբրդյունաբերությունը պետք է կարգա-
որի, ձենամշակման մնացորդների ոգտագործումը,
որը նույնական նշանակալից չափավ ճարպանյութեր
տա: Անհրաժեշտ է նույնացն ծավալել ճարպահանքի և
տիլտարագորումների ցանցը—սատկած անառող-
ութիւնության ուժությամբ յենթարկելու համար: Դա բնթա-
կի տարում ոճառագործական արդյունաբերությանը
ոչ պակաս քան 35 հաղար տոնն ճարպ կտա և նշանա-
պես քանակությամբ ել պարարտանյութ:

կարելի յէ ստանալ Ցարպային թթվուտներ ռճառա-
գործության համար (մասնավորապես բալխաշխափ շեր-
տեր, Քաղաքաց լճի յեղիքին-կազականում) — այս բո-
լորը վոչ միայն կապահովեն 1931 թ. ավելացրած ծրա-
գրի կատարումը, այլ նաև հնարավորություն են տալիս
արդեն 1932 թվին ոճառի արտադրությունը հասցենու-
այնովսի չափերի, վոր լիովին ապահովվի բնակչու-
թյան աճող պահանջը: Կառավարությունն անհրաժեշտ
է գտնել 1932 թ. ոճառի արտադրությունը հասցեի 1
միլիոն տոննի, այսպիսով ընթացիկ տարվա համեմա-
տությամբ ծրագիրը յերկու անգամ ավելացնելով:

Ուստի յանք ու շուրջ է առ կազմը մատակարարող բոլոր
Ուստադորությանը հումք մատակարարող բոլոր
կազմակերպությունների և հենց իրա, ոճառի արդյուն
նարերության ինդիրը կայանում են նրանում, վորպեսզի
հասնեն այդ պլանի կատարմանը:

լիւշը մասնաւոր կատարման համաժամանակ՝ 1931 թ. սպոստոս 5-ի վորոշումով գտել է, վոր-

«Կուռակցության և կառավարության պարագաների մասին» բեկտիվի այլակիսի թերակատարութեմը նշանակալից չափով բացարձում և բյուրոկրատական, անհոգ վերաբերմունքով դեպի սպառող լայն ժամանակի կարիքները, բթությամբ և իւնկանց աշխատանքները բայլէկնեկոբեն վերակառութելու.

մնկացողությամբ մի շարք տնտեսական մարմինների և աշխատակիցների կողմէց, վորոնք պատասխանատու յեն Ա.Պի-ի դիրքետիվների կատարման համար 1931 թ. ուսուաղործության ծրագրի մասն։

Կատարման հանձնաժողովը նշելով մի շարք միջոցառումներ ճեղքվածքն արագ կերպով լիկվիդացիայի յնթարկելու համար, առաջարկել և ԽՍՀՄ ժօդությունին և Մատակարարման ժողկոմին, դատի տալ այն անձնավորություններին, վորոնք պատասխանատու յեն Ա.Պի-ի դիրքետիվների կատարման համար։

Կատարման հանձնաժողովի վորոշման հիման վրա պետք և համապատասխան կազմակերպություններին ստիպել, վոր նրանք ընթացիկ տարում պայմանավորված քանակությամբ հումքը հանձնեն։ Հարկավոր և հումքի այդ տեսակների արտադրության ծավալումն ապահովվել 1932 թվին։ Վերջապես, հարկավոր և լայն ծավալել զիտական-հետազոտական աշխատանքները հումքի նոր տեսակների վորոնման համար, վորոնք դեռ արդյունաբերական պրակտիկայում չեն կիրառվում։

ՍԵՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կարելուրագույն նշանակություն ունի թեթև արդյունաբերության այն խուռարը, վորը դանվում և Մատաժողկոմատի հովանավորության տակ։ Դա սննդի արդյունաբերությունն է։ Մննդի արդյունաբերության ուեկոնստրուկցիան, նրան տեխնիկական բարձր աստիճանի վրա դնելը, հնարավորություն և տալիս սննդային հումքի մեծ կորուստների առաջն առնել։ Վորպես որինակ կարելի յե մատնանշել այն, վոր մինչև վերջին տարին տեխնիկապես բարձր մսի արդյունաբերություն չունենալու պատճառով, մենք մորթվող անասունի կենդանի քաշի միայն 60 տոկոսն ելինք ուղաղործում։ Ամերիկյան մսի արդյունաբերության մեջ կենդանի քաշի մինչև 95 տոկոսն ողաղործվում է։ Այսպիսով մսի հումքի ավելի քան 1/3 մասն իզուր կորչում եր, այն ժա-

ժանակի, յերբ մսի արդյունաբերության ժամանակակից տեխնիկայի կիրառման պայմաններում այդ կորուստները համարյա վերացվում են, և յերկիրը լրացուցիչ կերպով կոտանա նշանակալից քանակությամբ սննդառությամբ տում և տեխնիկական պրոցեսաներ։

Թեթև արդյունաբերության ըուլոր ճյուղերի՝ մեջ մննդի արդյունաբերությունն ամենից ավելի յե կասպած գյուղատնտեսությանը։ Դրա համար ել գյուղատնտեսության կողեւտիվրացիան սննդի արդյունաբերության ուժեղ ամք համար հնարավորություններ կատեղի ։ Մյուս կօմից, սննդարդյունաբերության գարգառում իր հերթին կարագացնի զյուղատնտեսության տեխնիկական ուեկոնստրուկցիան և կրծանքակի երա ապրանքանուր յան անին։

Ահա թե ինչու XVI կուսամակումաբը հատկապես նշեց լայն մասսաների սննդամատակարարման սպասարկութեալ մասնաշատեալ սպասարկությունը։ Համապատասխան այդ դիրքետիվի, Համկ (թ) կ կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան միացյալ պլենումն ու կառավարությունը 1931 թվի համար սննդարդյունաբերության արտադրանքի 57 տոկոս ամ սահմանեցին։

Սննդարդյունաբերությունը տեխնիկական վերակառուցման լայն ուղի յե մտել։ Արդյունաբերության այդ ճյուղում կավիտալ ներդրումներն ընթացիկ տարում կազմում են 588 միլիոն ուրբադի։ Կառուցվում են շաքարի, ծիթաճան, պահածոների, մարզաբնի, նշրջառակացի (կրամալո-պատօնական) մի շարք նոր զործարաններ։ Ընթացիկ տարում սկսված և առաջն յերկու ամերիկյան տիպի մսի կոմբինատոնների կառուցումը (Մուկվայում և Սեմիպահատինսկում)։ Ուրիշ արդյունաբերական կենտրոններում մսային կոմբինատորներ կառուցելու նախաղատրաստական աշխատանքներ մսկվում (մասնավորապես Լենինգրադում և Դոնբական մսկվում)։ Կառուցվում են նոր ալլաղացներ, սաղցարաններ, ելեկատորներ։ Լայնորեն ծավալվում է ձկնար-

զյունաբերության տեխնիկական ռեկոնստրուկցիան։ Այս բոլորն արդեն մոտակա տարիներում կսպառավիճիք մինչ այժմ հետամնաց կիսատնայնագործական անդարձյունաբերությունը և նրան կդարձնի լայն մասաների պարենային մատակարարման ու դրույզատնահառնաթյան սոցիալիստական վերակառուցման հղոր ադդակ։

Մինչ այժմ նշանակալից հաջողություններ ենք մեռք բերել շատարի արդյունաբերության մեջ։ Ճակնդեղ շանող շրջանների կոլեկտիվացման հիման վրա շաքարի արդյունաբերությունն անցնող տարում ավելի քան յերկու անգամ մեծացրեց շաքարի արտադրությունը։ 1931 թվին շաքարի արդյունաբերությունը 1930 թ. 17,5 միլիոն շենտների գիմաց բաց կթողնի 26 միլիոն գենաներ շաքար։ Արդեն անցնող տարում շաքարի արդյունաբերությունը 23 տոկոսով գերազանցել է մինչ պատերազմյան արտադրության միջին քանակը (1909—1914 թ. թ.), ըստ վորում պատերազմից առաջ աշխատում ելին 235 գործարաններ, իսկ այժմ մոտ 180 գործարան։ Այս համեմատությունը ցույց է տալիս, թե հեղափոխության տարիներում տեխնիկակես ինչքան է քարձրացել շաքարի արդյունաբերությունը։ Շաքար յեփերու սեղոնք նշանակալից չափով յերկարացվել է։ Բացի շաքարի արտադրության սեղոնի յերկարացումից, ժիաժամանակ զարգանում է ճակնդեղի չորացումը, վորը հնարավորություն է տալիս վերացնելու շաքարի արտադրության սեղոնականությունը։ Հնգամյակի վերջում շաքարի գործարանում կաշխատեն ամբողջ տարին։

Հնգամյա պլանով յենթագրվում եր, վոր վերջին տարում շաքարի արդյունաբերությունը 26 միլիոն ցենտներ շաքար—շաքարալաղ կարտագրի։ Շաքարի արդյունաբերությունն արտադրանքի այլ քանակին արդեն հասնում է ընթացիկ տարում։ Այսպիսով շաքարի արդյունաբերությունն իր հնգամյա պլանը կատարում է յերեք տարում։

Հնգամյակը յերեք տարում կատարում է նաև սննդուարդյունաբերության մեկ ուրիշ կարեոր ճյուղը՝ պահածոների արդյունաբերությունը։ Հնգամյա պլանով ժամանելի պահածոների ձեռնարկությունները 1932-33 թ. պետք է 650 միլիոն տուփ պահածոն արտադրելին։ 1931 թ. այդ ձեռնարկությունները—Սայուսկոնսերվի արդյունաբերությունը—պետք է 600 միլիոն տուփ պահածոն արտադրեն։ Պահածոների ամբողջ արդյունաբերությունը, հաշված Սայուսմյասոյի, Սայուլուիրայի և Կոռպերացիայի ձեռնարկությունները, 1931 թվին 955 միլիոն տուփ պահածոն կարտադրեն, այսինքն՝ 2½ անգամ ավելի քան 1930 թվին։

Պահածոների արդյունաբերությունը միայն հեղափոխությունից հետո յեղածել արդյունաբերական արտադրության խոչըն ճյուղերից մեկը։ Մինչպատերազմյան միայն կիսատնայնագործական գործարանների կային, վորոնց ընդհանուր կարողությունը 60 միլիոն տուփից չեր անցնում։ Այժմ պահածոների արդյունաբերությունն ունի այնպիսի առանձին գործարաններ, վորոնցից յուրաքանչյուրի արտադրությունը գերազանցում է մինչպատերազմյան պահածոների ամբողջ արդյունաբերության ուժը։ Այսպես, ընթացիկ տարում Նրիմսկայա ստանիցայում (Հյուսիսային Կովկաս) լիովին գործի գցվող կոնսերվի կոմբինատը տարեկան 100 միլիոն տուփ պահածոն արտադրելու ուժ ունի։

ԽՍՀՄ պահածոների արդյունաբերությունը արդեն անցել է յեկարպական բոլոր յերկրների պահածոների արդյունաբերությանը։ Բնթացիկ տարում պահածոների արդյունաբերության չափով ԽՍՀՄ-ն չԱՄՆ-ից հետո յերկրորդ տեղն է գրավում ամբողջ աշխարհում։


Այժմ նոր մասրդյունաբերություն է ստեղծվում։ Մինք արդեն հիմքից վերելքում, վոր ընթացիկ տարում սեղոնի երեկու նոր մսի կոմբինատների կառուցումը։ Մսի սոցիալիստական արդյունաբերության

այդ առաջին ձեռնարկությունները պետք են կարելվար դեբ խաղան մասի պրոբլեմի լուծման գործառմ:

«Մոսկվայում և Սեմինարատիններում յերկու խոչը մաք
սբյաններության կոմբինատոնների կառուցման ակիզրը
պետք է ծառայի վորովես բազա նոր մոի արդյունաբերության
ավագանը Կորհրդակին Միության մեջ»¹⁾

Սննդի արգյունաբերության կարևորագույն ճյուղը ամենահետամնացը ձերի արդյունաբերությունն է : Միայն 1931 թ. գարնանացանի կամպանիայից հետո Հնարավոր կլինի արդյունաբերության այդ ճյուղի հումքի բազայի գործացման գործում բեկումն առաջ կառացման բացառիկ հաջողությունը սոցիալստական վերաբերել : Գյուղատնտեսության սոցիալստական վերակառուցման բացառիկ հաջողությունները ձիթառա-

1) Համկ (բ) կ կենտրոնի և Կվ-Հ-ի Դեկտեմբերյան պլենում
գրաբառումը Մատուցելիութեան պերսպեկտիվ:



իուլառուբանների շրջաններում, համատարած կոլեկտիվացման այլարտումն այսպիսի շրջաններում, ինչպես չըստու. Կովկասը, Ստորին Վոլգայի և Միջին Վոլգայի մարզերը և կոլեկտիվացման հուժկու տեմպը վուշ ցանող շրջաններում՝ թույլ են տալիս ընթացիկ տարուժ 1½ անգամ ժենացնելու ձեթառու կուլտուրաների ցանքի տարածությունը։ Միայն թե նոր բերքն արդյունաբերությունը կստանա 4-րդ կվարտալում և միայն մասմբ՝ 3-րդ կվարտալում։

Դրա համար ել, չնայած հումքի բազայի նման կուժկու տճին, ընթացիկ տարում ձեթի արդյունաբերությունը հնարավորություն կունենա իր արտադրանքն ավելացնելու միայն 18 տոկոսով։ Բայց 1932 թիվց սկսած մենք կարող կլինենք բուսայուղի արտադրությունն այնպիսի չափերով ծավալելու, վոր լիովին կազմակերպի այդ կարելոր սննդամթերքի պահանջում

Բայցի ձիթատու կուլտուրաների ցանքի ընդարձակումից և բերքատվության բարձրացումից, բայցի ձիթատու բույսերի նոր տեսակների կիրառումից (սոյս, զենագեղակ, կունջութ, արախիս և այլն), ձեթի արդյունաբերության առաջ կանգնած ե վայրի բանող հումքի ողազորման հարցը:

Այդպիսի վայրի բանող կարեվորագույն հումքերից
տեղի յեգելնաընկույզն է : ԽՍՀՄ-ում յեղենու անտառ-
ները 25 միլիոն հեկտար տարածություն են բռնում ,
ՑԵԲէ մենք մոտակա տարիներում կազմակերպված յե-
ղենաբարդյունաբերության համար ողողագործենք դրս-
բահասանելի յեղենու անտառները 2½—3 միլիոն հեկ-
տար տարածությամբ , ապա մենք կարող ենք ավելի քան
կես միլիոն տոնն յեղեկնուց ձեթի արտադրության
համար հումք ստանալ , և բացի գրանից , նշանակալից
քանակությամբ հումք տալ հրուշագործական արդյու-
նաբերությանը :

ուշադրություն դարձրեց : Նրա գիրքեկտիվի համաձայն՝
իր ժամանակին հատուկ մարմին ստեղծվեց—կեդրո-
պրոմ—վորն սկսեց յեղենու արդյունաբերության կազ-
մակերպումը : Սակայն, այդ ժամանակվանից յեղել-
նու պրոբլեմը մոռացվեց և միայն ընթացիկ տարում
վարդիմիր իլլիչը գիրքեկտիվն սկսում է իրականանալ
դորձնականում : Մատողկոմատի վորոշումով Սիրի-
ուում ստեղծվել է յեղենու ձիթահան տրեստ : Ընթա-
ցիկ տարում կկառուցիլի յեղեվնուց ձեր համելու հա-
տուկ գործարան : Ընթացիկ տարում 120 հազար տաճ-
յեղենու ընկույլ պետք է մթերվի :

Նշանակալից քանակությամբ ձեթի հումք կարող
են տալ հաճարի անտառները Հյուսիսային Կովկասութ-
եա Անդրկովկասում։ Անհրաժեշտ է նույնպես տեխնի-
կական և փրոց գեղղքերում ել անդատու յուղ ստանա-
լու համար ողազգործել վայրի խոտարութեր (վայրի-
կուազատը—Սիրիում, կութմարան—Միջն Ասիա-
յում, նույնպես և շատ տարածված գժախտերը, ինչ-
պես մոլախութը)։ Զեթ ստանալու համար անհրաժեշտ
է ողտազգործել անդրի արդյունաբերության մյուս ճյու-
ղերի մասցորդները—յեղիպտացորենի բնայուղները,
խաղողի կորիզը, զանազան մրգերի կորիզները, գդու-
մի օերմը և այլն։

Այսպիսով նաև ձեմի արդյունաբերության մեջ
մենք մեծ հասարակորություններ ունենք հումքի նոր տես-
սակներ ոգտագործելու ընապավառություն :

Ճարպային գժվարությունները հաղթահարելու համար խոչորագույն նշանակություն ունի ոտք, միայն անցյալ տարի կազմակերպված արդյունաբերական ձյուղը—Մարդարինի արդյունաբերությունը։ Այդ ձյուղն աճում է բացառիկ բարձր տեմպերով, վորոնք խոշոր չափով գերազանցում են հնդամյա պլանի նաև բաղդաւամները։ 1930 թվին մեր մարդարինի գործարադրաներն արտադրել են միայն 6,3 հազար տոնն մարդարին։ Ցերացիկ տարում մարդարինի ատադրության

Յ՞ իկազմի 63,3 հազար տոնն— անելով ավելի քան
տասն անգամ:

1931 թվի առաջին կիսամյակում սննդի արդյունաբերության մի շարք ճյուղերում պլանը թերակատարված է, չնայած սննդի արդյունաբերությունը մեծած և ունեցել անցյալ տարվա համեմատությամբ։ Մննդի արդյունաբերության արտադրանքն առաջին կիսամյակի ընթացքում աճել է 30 տոկոսով։ Մննդի արդյունաբերության այնպիսի ճյուղ, վորպիսին պահանջների արդյունաբերությունն է, 42,7 տոկոս աճ և ունեցել անցյալ տարվա համեմատությամբ։ Հրուշագործական արդյունաբերությունն արտադրանքն այնելացրել է ավելի քանի յերկու անգամ, մակարոնինը՝ 37 տոկոսով։ Այն։ Այնուամենայնիվ, այդպիսի աճն անբավարար է։ Դա չի համապատասխանում վոչ սննդի արդյունաբերության վերաբերմամբ աճող պահանջին և վոչ ել այն հնարավորություննենոին, վոր մենք ունենք։ Պահածների արդյունաբերությունը կիսամյա պլանը կատարել է 57,6 տոկոսով, ձեթինը՝ 88,3 տոկոսով, հրուշագործականը՝ 93 տոկոսով։ Անբավարար են նմանապես հուլիսի և սուստոսի ցուցանիները։

Սեպտեմբերը և հատկապես չորրորդ կիմարտալը— օկտոնային սննդարդյունաբերության ամենածավալալուն արտադրության ժամանակաշրջանն է։ Այդ ժամանակաշրջանում նա կարող է և պարտավոր և լիովին լիկիդացիայի յննթարկելու այդ ամոթալի հետամնացյուղերում ել դերակատարել իր տարեկան պլանը։

ՊԱՅՔԱՐ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՅԵՎ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ

Քանակական առաջաղբանքների հետ միասին թեթև սրբյունաբերության առաջ կանգնած են բացառիկ կարելորության խնդիրներ—պլանի վորակական գումարի կատարման բնագավառում։

Համեմ (բ) կ կենուկոմի և ԿՎՀ-ի գեկտեմբերյան պլենումն ընդդեց, վոր

«Նախաղծված պլանի բոլոր մասերի և հատկապես նրա վորակական ցուցանիների անպայման կատարման վրա (արդյունաբերության արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, և նարարության արժեքի իջեցումը, աշխատանքի արտադրագականության բարձրացումը, բերքատվության բարձրացումը, արտադրանքի վորակի բարելավումը և այլն) պետք է ուշադրության և յեռանդի մաքսիմումը կենտրոնացվի»։

Թեթև արդյունաբերության մեջ ինքնարժեքի իջեցումը հատկապես շատ կարելվոր ժողովրդաւոնական իջեցումը և հիշել, վոր թեթև արդյունաբերությունն ինքնարժեքի իջեցումն միջոցով սոցիալիստական կուտակման այնպիսի չափ պետք և ապահովի, վորը հարկավոր և վոչ միայն հենց իր՝ թեթև արդյունաբերության կապիտալ շենության վրա արդարման համար, այլև իր կապիտալ շինարարության նախաղծված տեմպերի ապահովման համար։ Այսպիսով թեթև արդյունաբերության մեջ ինքնարժեքի իջեցման պլանի կատարմանից Փինոլիանը, վորովհետեւ «ակախված կինի ամբողջ Փինոլիանը, անհնար և իւսականացնել նախատեսված տնտեսութան պլանը ժողովրդական տնտեսության բոլոր հյուղերում»։¹⁾

Ընթացիկ տարում ԺՃԽ-ի յնթակա թեթև արդյունաբերությունն ինքնարժեքը պետք և իջեցնի 5,6 տոկոս։ Բացի դրանից Մատֆողիկոմատի սննդարդյունաբերությունն ինքնարժեքը պետք և իջեցնի 11 տոկոսով։ Այդ առաջաղբանքի կատարման համար մոբիլիզացիայի պետք և յննթարկվին բոլոր ուժերը։

Չնայած առանձին ճյուղերում հումքի պլակատու-

1) Համեմ (բ) կ կենուկոմի ԿՎՀ-ի գեկտեմբերյան միացյալ պլենումի բանաձիրը 1931 թ. Յողովրդական տնտեսության պլանի մասին։



Լակինի տմւան ֆարբիկայում (Սորիմսկի շրջան) տացված և փունկցիոնալկա: Նկարում—բանվորութուն տվորեցնաւմ եմ փունկցիոնալ մերոդով աշխատելը:

թյան, նորից թեթև արդյունաբերությունն ինքնարժեա քի իջեցման նախատեսված պլանը կառարելու համար բավարար ռեզերվներ ունի: Որինակի համար բավական ե ասել, վոր մի չարք բամբակեղենի ֆարբիկաների, մասնավորապես Լակինի անվան ֆարբիկայի, աշխատանքի կաղմակերպության ֆունկցիոնալ մեթոդին (ֆունկցիոնալկա) անցնելը հսկայական փեկտ տալիս արտադրողականության բարձրացման տեսակետից:

Ֆունկցիոնալկայի եյությունը կայանում է նրանում, վոր հիմնական բանվորների աշխատանքը բաժանվում և առանձին ռեզերվացիաների և այդ ռեզերվացիաների (ֆունկցիաների) կատարումը հանձնարարվում է առանձին բանվոր-ֆունկցիոներներին: Ֆունկցիոնալկան բարձրացնում և աշխատանքի արտադրողականությունը, բարելավում և ձեռնարկության աշխատանքի ամբողջ կաղմակերպությունը, բարձրացնում և արտադրանքի վորակը: Աշխատանքի կենտրոնական ինստիտուտի (ՊՄԴ-ԱԿԻ) հաշվառքով՝ 70 տեքստիլ ֆարբիկաների ֆունկցիոնարկային անցնելը՝ տարեկան վո՞զակաս քան 30 միլ. ոուրլու իննայոդաւթյուն կտա:

Միայն թե ֆունկցիոնալկայի կիրառման դեպքում արտակարգ շտապողականությունն անթույլատրելի յէ: Ֆունկցիոնալկային անցնելը պետք և ուշադիր կերպով հախազարաստվի: Նրա դերը պետք և պարզ լինի յուրաքանչյուր բանվորին: Պետք և մեքենաների սպայությունը բանվորին: Պետք և մեքենաների սպայությունը բանվորին: Միարկման հարցում խուսափել դիմազրկությունից: Մի շարք աեքստիլ ֆարբիկաներում դիմազրկությունը՝ սխալ կաղմակերպված ֆունկցիոնալկայի ուղեկիցն ե: Դիմազրկության և աշխատավարձի հավասարեցման դեմ պետք և համառ պայքար մղել:

Ինքնարժեքի իջեցման առաջադրանքների անպայմանորեն կատարման հետ միասին անհրաժեշտ և վճռական քեկումն առաջացնել նաև արտադրանքի վորակի բնագավառում:

Արտադրանքի վորակի բարեկավման համար պայ-

քարելու մասին կուսակցությունը պարզութաչ դերեկտիլ
ե տվել:

Կուսակցության XVI համագումարը գտնել է, վոր՝

«Արտադրանքի վորակի նկատմամբ պետք և սահմանվի
տնտեսական մարդիների վոչ պահաս պատասխանատվու-
թյան, քան քանակական առաջադրանքների թերակառար-
ման համար, ըստ փորում մասսայական դործածության ար-
ագրանքի հիմնական ճյուղերի արդինապահնը կազմելիս
պետք և նախատեսնվեն ամյալ արտադրանքի վորակական
ցուցանիւրը»¹⁾:

Այսպիսով արտադրանքի վորակի բարձրացումը և
մասնավորապես թեթև արդյունաբերության արտա-
դրանքի բարձրացումը, կարեվորագույն քաղաքական
խնդիր և հնարիխանում: Պայքարել արտադրանքի վո-
րակի բարձրացման համար, պայքարել թեթև արդյու-
նաբերության մեջ բարակի դեմ նշանակում և միաժամա-
նակ պայքարել քանամատակարարման ռեսուրսների մե-
ծացման համար, նրա վորակի բարելավման համար:
Հարկավոր և բայց կենքորեն յուրացնել, վոր «դասա-
կարգային թշնամին—կուլտին ու նրա ձայնակիցները—
փորձում են զարծվածքի յուրաքանչյուր վատորակ
մետրն իրենց հակածեղափոխական աղիսացիայի ար-
դումնենու դարձնելը»²⁾:

Հատկապես կարևոր ե արտադրանքի վորակի
բարձրացումը սննդամթերք արտադրող սննդա-արդյու-
նաբերության մեջ:

Պահին, նրա քանակական և հատկապես վորակա-
կան ցուցանիւրի կատարման կարեռագույն աղղակ-
ներից մեկը հանդիսանում է տնտեսաշվարկի կիրառումն
արդյունաբերական ապարատի բոլոր ողակներում:
Տնտեսաշվարկը անտեսական շահագրգության ստեղ-

1) Համեկ(բ)կ 16-րդ համագումարի բանաձեռ «Արդյունաբերու-
թյան հնամայա պլանի կատարման մասին»:

2) Տրյոխզորկայի բանվորների և բանվորությունների 1931 թ.
հունիսի 20-ի դիմումից:

ծելով ձեռնարկության մեջ, ցեխում, բրիգադում—ո-
ժանդակում և ծրագրի կատարմանը, ինքնարժեքի իջեց-
թանը, պակասեցնում և բրակը և բարձրացնում և ար-
ագրանքի վորակը: Հետեւղողականորեն անցկացվող
տնտեսաշվարկը պետք և հարվածի այն շռայլությանը,
վորը զենքու գոյություն ունի թեթև արդյունաբերու-
թյան ձեռնարկություններում՝ հումքի ոգտագործման
բնադրավառում: Դրանով իսկ արդիինպահնի կատար-
ման համար տնտեսաշվարկը կտա լրացուցիչ հումքային
ունարությունը:

Ձեռնարկության տնտեսաշվարկն անհնար է, առանց
ցեխերը տնտեսաշվարկի անցկացնելու: Միայն այդ դեպ-
քում իսկական հնարավորություններ կստեղծվեն ոռուե-
մի առ ոռութիւն ստուգելու ամբողջ ձեռնարկության տըն-
տեսությունը: Դրա հետ միասին իրական իրացրած
տնտեսաշվարկ, սոցիալիստական ձեռնարկության իս-
կական տնտեսաշվարկ, հնարավոր և միայն զեպ-
քում, յեթե նա ամրացված և ներքեվից յեկող տընտե-
սաշվարկային շարժումով, յեթե տնտեսաշվարկային ցե-
խում աշխատելու յեն տնտեսաշվարկային բրիգադներ:

Լենինգրադի բանվորներ՝ ընկ. ընկ. կապկովի (Լե-
նինի անվան գործարան) և Նիկոլայևի (Բալթիական
դրութարան) նախաձեռնությամբ ստղծվեցին առաջին
տնտեսաշվարկային հարվածային բրիգադները: Այժմ
հարվածային բրիգադների տնտեսաշվարկին անցնելու
շարժումը լայն չափեր և ընդունել: Տնտեսաշվարկային
բրիգադները Լենինգրադի, Մոսկվայի, Խարկովի և
ԿՍՀՄ ուրիշ քաղաքների ձեռնարկություններում փայ-
տուն կերպով ֆնարություն բռնեցին: Նրանք տալիս են ի-
րենց քանակական առաջադրանքների կատարումն ու գե-
րակատարումը, բարձրացնում են արտադրանքի վորա-
կը, իջեցնում են բրակը, պակասեցնում են հումքի,
ոյութեղենի, գործիքների գործածությունը (գրանով-
ել իջեցնում են ինքնարժեքը): Այսպիսով տնտեսաշվար-
կային բրիգադը հարվածային բրիգադի բարձրագույն
ստորագումն է, վորի մեջ քանակական և վորակական

Յուցանիշների կատարումը կոնկրետ կերպով ձեվակերպված է, վորի մեջ բանվոր-հարվածայինների ենատուղիազմը համատեղվում է խնայողական վերաբերմունքին դեպի արտադրությունը և իրենց պարտավորությունների կատարման նյութական շահագրգուվածությանը:

Տնտհաշվարկային բրիգադներ գոյություն ունեն վոչ միայն ծանր արդյունաբերության առաջավոր ձեռնարկություններում: Թեթև արդյունաբերության մի շարք գործարաններ ու ֆաբրիկաններ նույնական իրենց լավագույն տնտհաշվարկային բրիգադներն ունեն, վորոնք, չնայած իրենց կարծատե գոյության, արդեն փայլուն որինակներ են տվել: Որինակի համար այդպիսի բրիգադներ կան «Կրասնի Կառուչուկ»-ում, Զեմսկաչկայի անվան կաշեգործարանում, «Կրասնի Ոկտյաբր» հրուչագործական ֆաբրիկայում և միքանիուրիշ ձեռնարկություններում: Հարկավոր ելայն ծավալել տնտրիբագային շարժումը թեթև արդյունաբերության ձեռնարկություններում:

Տնտհաշվարկային բրիգադների նշանակության առողությունիստական թերագնահատմանը, վորը դեռ շատ ձեռնարկություններում հանդես են բերում տնտեսական և պրոֆելիութենամիան կազմակերպությունները, վերջ պետք է դնել: Հարկավոր ե հաստատապես պարզել, վոր տնտհաշվարկային բրիգադները—դա հենց իրենց բանվորական մասսաների կողմից առաջարկված կոնկրետ ձեն ե, սոցիալիստական տնտհաշվարկի, տնտեսությունը ոռուբրով ստուգելու մասին կուսակցության տված դիրեկտիվների հետեւղողական իրականացման:

Տնտհաշվարկի կիրառումը ձեռնարկության պրակտիկայում անհամեշտ է միաձուլել տեխնիկայի տիրապետման ինդիքների իրականացման հետ: Տեխնիկական դեկավարության ամբացումը, լայն մասսաների պարագայության տիրապետությունը համար, տնտեսության ստուգումը ոռուբրով—ահա ընթացիկ տարվա պլանի կատարման և թեթև արդյունաբերության հե-

ապացա զարդացման հիմքը: Տնտհաշվարկի, գումարաբանության տեխնիկայի տիրապետումն, սոցմրցակցության և հարվածային գարդացումը, նրան բարձր աստիճանի վրա դնելը (տնտհաշվարկային բրիգադներ, հանդիպահական արդիքինապահան), ներդործաբանային պլանավորման բարելավումը—այս բոլորը սկսուք ե լիկվիդացիայի յանթարկեն արդֆինապլանից յետ մնալը, վորը մենք ունեցել ենք թեթև արդյունաբերության մեջ 1931 թ. առաջին կիսամյակում:

Պահնի թերակատարումը բացատրվում է վոչ միայն հումքային դժվարություններով, այլ գլխավորապես ներքին, արդյունաբերությունից կախում ունեցող պատճառներով:

Նոր պայմաններում, համատարած կոլեկտիվացման և գործադրկության լիկվիդացիայի պայմաններում, աշխատելը, ինչպես ծանր արդյունաբերությունից, նույնպես և թեթև արդյունաբերության տնտեսավարներից պահանջում ե «նոր ձեզով աշխատել» (Ստալին):

Շատ ձեռնարկություններում, հատկապես բամբակեղենի արդյունաբերության մեջ, մսծ և բանուժի հոսունությունը: Աշխատանքի կազմակերպման հարցեցին բավարար ուշադրություն չի զարձվում: Վորպես հետեւղանք աշխատանքի անբավարար կազմակերպման հատկապես զիմապրկության, անում են սարքավորումների կանոնադրումները:

Դիմապրկությունը և աշխատավարձի հավասարեցումը—ձեղքվածքների ամենալուրջ պատճառներ են թեթև արդյունաբերության մեջ: Այսպես, տեքստիլ արդյունաբերության մեջ վորսակյալ բանվորների աշխատավարձը կարզից կարդ (ՕՐ ԲՐՅԱԴ և բարձրակարգ անդամների գաղաքաղ, քան անվորակ բանվորներինը): Վերջին ժամանակներու դրա պատճառով տեքստիլ արդյունաբերությունից բանվորները չվում են դեպի մյուս հյուղերը (մասնավորապես դեպի մեքենաշինություն):

«... Վերացնել զիմազգկությունը, բարելավել աշխատանքի կազմակերպությունը, ձեռնարկություններում ճիշտ զառավորել բանաժը—այս և ինդիրը»¹⁾

Եերկրորդ կիսամյակում թեթև արդյունաբերության հումքով բեռնվածությունը նշանակալից չափով կրարձանաւ: Աճում է տեքստիլ արդյունաբերության մատակարարումը հումքով: Բեղլինի արդյունաբերությունը հնարավորություն և ստանում մեծ չափով ավելացնելու նախնական պլանները:

Աճում են նույնպես սննդաբերդյունաբերության հումքային հնարավորությունները:

Այս բոլոր բարենպաստ սպայմանները թեթև արդյունաբերությանը թույլ են տալիս արդեն իսկ մոտակա ամիսներում վճռական բեկումն առաջ բերել: Թեթև արդյունաբերությունը պետք է առաջ շարժվի և իսկական բայց նվիկյան աշխատանք ծավալի 1931 թ. պլանը կատարելու և գերակատարելու համար:

Աշխատավարձի հավասարեցման լիեվելուցիան, աշխատավարձի վերակառուցումը պլասավորող պրոֆեսիաների քաջալերման հիման վրա և վորակավորման բարձրացումը, աշխատանքի կազմակերպման բարելավումը, բանուժի կազմակերպված հավաքը, կոլտընակառությունների և կոլտնահասականների հետ դաշնագրեր կնքելու կարգով, իրական պայքար դիմադրկության դեմ, աշխատանքի մեքենայացումը, տնտեսվարկի ուժեղացումը, սոցմքակցության և հարվածայնության վերելքը—ահա մարտական խնդիրների կատարման միջոցը—հեղափոխական տեմպերով առաջ շարժելու թեթև արդյունաբերությունը:

Պլանի կատարման կարելորագույն պայմանը կուտակած և պրոֆիլուրենական սուխատակների վերակառուցման և ձեռնարկություններում: Գործարանային և Փարբեկային կուսկազմակերպություններն

ընկ: Ստալինի դիրեկտիվների հիման վրա պետք ե մեծ մասսայական աշխատանք ծավալեն, պետք ե բանվորական ակտիվության նոր ալիք բարձրացնեն: Հարկավոր և ստորին ամուր ողակ ստեղծել: Հերթափխություն, բրիգադ, ազգիպատ—այստեղ պետք ե կենտրոնացվի կուսակցական և պրոֆմիութենական աշխատանքի ուշադրությունը: Կուսմարմինների վերընտրության կամպանիան մի շարք ձեռնարկություններում առաջ ե բերում մասսաների արտադրական նախաձեռնության մորիվլուցիան: Այդ վերելքը պետք ե ամրացնել և դարձացնել:

Հարկավոր ե նույնպես հիշել, վոր բանվորության կուրտ-կենցարական սպասարկման ուժեղացումը—պլանի համար մղվող պայքարի լրջագույն տարրերից մեկն ե: Այդ բնագավառում խոչը նշանակություն ունի կոռպերացիայի աշխատանքների վերակառուցումը: Բանվոր հասարակականության խնդիրը կայանում ե նրանում, վոր նա ողնի կոռպերացիային՝ կատարելու շամեկ(բ)կ կենսկամի, ժողկոմինորչի և Յենտրոսայուղի դիրեկտիվները, վորպեսզի կոռպերացիան հնդամակի յերրորդ վճռական տարվա պլանի կատարման հզոր ազդակ դառնա:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն կենտրոնացնել հասարակական սննդի բարելավման վրա: Հարկավոր բարձրության վրա դնել «սնունդի ցեխը»—նշանակում ե, արդքինուղանի կատարման համար ապահովիլ բանութի հսունության դեմ մղվող պայքարի և աշխատանքի ուղիղ կազմակերպման պայքարի անհրաժեշտ պայմաններից մեկը: Հասարակական սնունդը հնարավորություն և տալիս արտադրության մեջ քաշելու բանվորի ընտանիքի անզամներին, մի բան, վորը գործադրկության վկիվագիայի և կադրերի պահառակության հետ կապված՝ նշանակալից դեր պիտի խաղա ձեռնարկությունները բանուժով ապահովելու գործում:

«Յերկի հնդասութիվակացիան և խոչը համայնացված տնտեսության անցնելը պահանջում են հասարակական սնունդի

այնպիսի դրույթը, վորս բանվորական լայն մասսաներին, ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին գործնականություն տալ լիովին ոգուվելու հասարակական ուսունակի ծառայություններից»:¹⁾

Ահա թե ինչու կուսակցության կենտրոնը պահանջում է, վորայի բնագավառի վրա կուսակցական, կոմյերիտական, պրոֆմիութենական և տնտեսական կազմակերպությունների սոմնալուրջ ուշադրությունը կենտրոնացվի:

«Յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կուսանդամ և կոմյերիտական, և սոսացին հերթին բոլոր նրանք, ովքեր աշխատում են հասարակական սննդի ձեռնարկություններում, պարտավոր են գործնականում առաջովելու հաջող պայքար հասարակական սննդի բարոր պահանությունների դեմ և դարձնել այն կարեւրագույն ողակ բանվոր դասակարգի հնացաղի բարելավման աշխատանքներում»:²⁾

ՀՆԴԱՄՑԱԿԸ ԶՈՐՍ ՏԱՐՈՒՄ

Կասկած չկա, վոր թեթև արդյունաբերության բոլոր բանվորները, ինժեներա-տեխնիկական աշխատակիցները և բոլոր կաղմակերպությունները կկատարեն իրենց պարտքը յերկրի տառաջ և կուսակցության գըլխավոր զծի հիման վրա վճռական հաղթանակներ ձեռք կրնեն հնդամյակի յերրորդ վճռական տարվա պլանի համար մզգով պայքարում: Լիկվիդացիայի յենթարկելով վնասարարության հետևանքները, ծավալելով սոցիալիստական մրցակցության նոր ձեվերը, պայքարելով տնտհաշվարկի համար, թիթեւ արդյունաբերությունը կկատարի իր առաջ դրված ինդիրը—1931 թվին արտադրանքը 28,8 տոկոսով ավելացնելը:

¹⁾ Համկ (բ) Կ կենտկոմի 1931 թ. ոգոստոսի 19-ի վորոշումը «Հասարակական սննդի բարելավման միջոցների մասին»:

²⁾ Նույն տեղ:

Կետական արդյունաբերության տարեկան աճի 28,8 տոկոս, իսկ տնայնագործական-կոոպերատիվայինի 50 տոկոս—այսպես են 1931 թ. ցուցանիշները, վորոնց կատարման համար պետք է համառ պայքար մղել: Յեկվոչ մի կապիտալիստական յերկրում, ինչպիսի պայմաններ ել լինեն, հնարավոր չել թիթեւ արդյունաբերության զարգացման նման տեմպ: Այն ժամանակ, յերբ ամենուրեք կապիտալիստական յերկրներում թիթեւ արդյունաբերությունը, ինչպես նաև ամբողջ համաշխարհային տնտեսությունը, տառապում է խստագույն տընտեսական կրիզիսի ծիրաններում, յերբ վորպես հետեւավանք լայն մասսաների աղքատացման՝ անդլիական, ամերիկյան, գերմանական, ինչական տեքստիլ և կոշիկի ֆաբրիկաները կրծատում են արտադրությունը և փողոց են չպրոտում տանյակ ու հարյուրավոր հազար անգործների, Խորհուրդների Յերկրում ամբողջ ժողովրդական տնտեսության աննախընթաց վերելք է տեղի ունենում և հաղթական պայքար ե մղվում հնդամյակը չորս տարում կատարելու համար:

Այդպիսի տեմպեր հնարավոր չեյին լինի մեղանում, յեթե մենք, ինչպես այդ յենթադրում եյին աջ ուղղութունիստները, հրաժարվեյինք ինդուստրացման և համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից: Այդպիսի տեմպեր չեյին լինի մեզ մոտ նույնպես և այն գեպքում, յեթե մենք լսեյինք տրոցկիստներին և անցնեյինք յերկրի կամբակամական ելեմենտների ղեծ ծավալուն հարձակման 1926—27 թվերին, յերբ զեռ այդպիսի հարձակման համար բավարար բազա չկար հանձին խորհանտեսությունների և կոլտնտեսությունների:

Հակահեղափոխական տրոցկիզմի տապալումը, պայքար ընդդեմ աջ ուղղութունիզմի, վորպես գլխավոր վտանգի, պայքար կուսակցության զծի «ձախ» աղավաղումների ղեմ—ապահովեցին հաղթանակը համատարած կոլեկտիվացման և ինդուստրացման ֆրոնտում և

դրանով ուժեղ բազա նախապատրաստեցին թեթեև արդյունաքերության ծալվաման համար:

Կուսակցության գլուխվոր գծի անշեղ իրականացումը հնարավորություն կտա հնդամյակի չորրորդ յեղափակման տարում եւ ավելի բարձրացնել թեթեև արդյունաքերության աճի տեմպերը:

Կարելորագույն տեխնիկական կուլտուրաների ցանքի պլանների գերակատարումը (բամբակ, վուշ, անկնդեղ և այլն) բերքատվության բարձրացման և բերքահավաքի ճիշտ կազմակերպման համար բայց լինյան պայքարի պայմաններում նոր բազա կտա նրա հետագա զարգացման համար:

Թեթև արդյունաքերության մի շարք ճյուղեր արդեն ընթացիկ տարում լիովին կատարում են իրենց ըընդամյակը (շաքարի, պահածոների, մախորկայի, հրուշագործական, նշշրամեղրահացի, կոչկի, տրիկոտաժի, կարի, լուցկու, աղի և միքանի ուրիշ ճյուղեր): Միայն թե կան նշանակալից քանակությամբ ճյուղեր, վորոնք հետ են մնում հնդամյա պլանի առաջադրանքներից:

Համատարած կոլեկտիվացման ավարտումը հիմնականում մի շարք հացահատիկացին վճռական չըրջաններում դեռ 1931 թվին, կոլեկտիվացման բացարկի հուժկու տեմպերը տեխնիկական կուլտուրաների շրջաններում (շրջանների մեծ մասն արդեն գերակատարել և զամկ (բ) կ կենտկոմի և կովկանի գեկտեև ցերյան միացյալ պլենումի առաջադրանքները և այն, վոր ճակնդեղի ու բամբակի շրջաններում կոլեկտիվացումը հիմնականում կավարտվի 1932 (թ) — այս բոլորը հարավորություն են ստեղծում, վոր թեթեվ արդյունաքերությունը, ԽՍՀՄ-ի ամբողջ ժողովրդական տնտեսության հետ միասին, իր հնդամյակը կատարի չորս տարում:

«Գոյություն ունին վորոշ մերձկուսակցական քաղենիներ, վորոնք հավատացնում են, թե մեր արտադրական ծրադիրն անբական և անդորձագելի: Դա նման է Շեք-

թինի «իմաստագույն խարածուկերին», վորոնք միշտ պատրաստ են իրենց չուրչն «անմտության դատարկություն» սփռելու: Իրական ե, արդյոք, մեր արտադրական ծրագերը: Անպայման, այսու: Նա իրական ե թեկուզ և նրա համար, վոր մենք մեր առջև ունենք նրա իրականացման բոլոր անհրաժեշտ պայմանները: Նա իրական ե թեկուզ և նրա համար, վոր նրա կատարումն այժմ կախված ե բացառապես մեղմնից, մեղ մոտ գտնված հարուստ հնարավորություններն ողտադրծելու մեր կարողությունից և ցանկությունից: Ապա ինչո՞վ բացարկել այն փաստը, վոր արտադրության մի շարք ձեռնարկություններ ու ճյուղեր արդեն զերակատարել են պլանը: Հիմարություն կլիներ մտածել, վոր արտադրական պլանը հանգում ե թվերի և առաջադրանքների թվարկմաբք: Իրական ության մեջ արտադրական պլանը միկրոնավոր մարդկանց կենդանի և պրակտիկ գործունեյությունն ե: Մեր արտադրական պլանի ռեալիտյումը՝ զանը կերտող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրագրի ռեալությունը՝ դա կենդանի մարդիկն են, դա մենք ենք ձեզ հետ, աշխատելու մեր կոմքը, մեր պատրաստակամությունը նոր ձեռվ աշխատելու, պլանը կատարելու մեր վճռականությունը: Կա՞, արդյոք, մեզ մոտ այդ վճռականությունը, Այսու, կա: Նշանակում ե, մեր արտադրական ծրադիրը կարող ե և պետք ե իրականացվի»:¹⁾


Մենք թեվակուել ենք ողցիալիզմի շրջանը: Ընթացիկ տարում մենք ավարտում ենք սոցիալիստական ելունումիկայի ֆունդամենտի կոռուցումը ԽՍՀՄ-ում: Ընթացիկ տամնամյակում մենք պետք են հանենք և անցնենք առաջավոր կապիտալիստական յերկներին տեխնիկականահական տեսակետից: Այդ խնդիրն ամենից առաջ պահանջում ե ծանր ինդուստրիայի առավելաբար զարդացումը: Մետաղ, քարածուխ, մեքենաշինություն, քիմիա, Արևելքում՝ նոր քարածիսամենակալություն, գիտական բազայի ստեղծումը, եւեկտրիֆիկացիա—ահա-

1) ՍՏԱԼԻՆ. — «Նոր պայմաններ— տնտեսական չինարարության նոր ինդիրներ»:


այն վճռական ողակները, վորոնք կապահովեն մեր Հաղթանակը: Բայց դրա հետ միասին, ծանր էնդուստրիայի նվազումների հիման վրա, մենք արագությամբ առաջ կշարժենք թեթև ինդուստրիան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Սացիալիզմի շինարարությունը ԽՍՀՄ-ում և աշխատավորության բանի բարեկեցության անը | 62 |
| Ծանր և թերև արդյունաբերությունը թեթևի վերելքի լծակն ե | 63 |
| Ծանր արդյունաբերությունը թեթևի վերելքի լծակն ե | 66 |
| Ծանր արդյունաբերության դեկավար դերը հումքի անկախության համար մզգող պայքարում | 69 |
| Պայքար աջ թեքման դեմ և թեթև արդյունաբերության զարգացումը | 15 |
| Մեր հաջողությունները հումքի ֆրոնտում | 16 |
| Բամբակ | 19 |
| Վուշ և կանեփ | 20 |
| Նոր տեքստիլային կուլտուրաներ | 21 |
| Աննդի հումք | 22 |
| Մեքենայացումը կարեվորագույն խնդիրն ե | 24 |
| Պայքար հումքի նոր տեսակների համար | 26 |
| Սրագ լիկիդացիայի յենքարիկ վնասարարության հետևանքները | 34 |
| Թերև արդյունաբերությունը վերելք և ապրում | 41 |
| 1931 թ. թեթև արդյունաբերության տեմպերի աճման տարին ե | 41 |
| Տեքստիլ | 45 |
| Կոչիկ | 52 |
| Ռեզին | 57 |
| Ոճառ | 61 |
| Աննդի արդյունաբերություն | 64 |
| Պայքար վորակական ցուցանիշների և տնտեսաշարկի համար | 72 |
| Հթզամյակը չորս տարում | 82 |



ԳԻՒՅ 30 ԿՈՂ. (2⁰/₄ մ.)



Ա. ԳՐԵЙՇՄԱՆ

ЛИЦОМ К ЛЕГКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

Գունադատ ССР Արմենիա
Ֆրիզն - 1932

ՀՀ Ազգային գրադարան



NL0203609

31 941